Ինքը լայվ է մտնում ու ասում՝ ուժեղ տղերք, ու ասում մի տեղից, որտեղ օձն իր պորտով չի կարող մտնել ու այդտեղից հաթաթա տալ: Սա Փաշինյանի էությունն է: Ուժեղ տղերք ասողը պիտի սպորտային շորերը հագած՝ հրապարակ գար կամ սպորտդահլիճ գնար՝ առանց ախրանայի, մարդիկ կգնային ու ցույց կտային, թե ուժեղ տղան ով է:

Կարդացեք՝ էջ 4

Անձը լակոնիկ եւ հստակ ասում է այն, ինչը խնդրի էությունն է, ինչպես մտածում է, եւ ինչպես սպասելի է, որ կգործի: Մտածողության, խոսքի ու գործի այդ լակոնիզմն ու անկաշկանդությունն էլ վստահություն են ներշնչում Սամվել Կարապետյանի հանդեպ՝ բերելով աջակիցներ՝ ՀՀ առաջին նախագահից մինչեւ քաղաքացիներ եւ անդին:

Կարդացեք՝ էջ 5

Նիկոլն իր վարչախմբի հետ իր դիվային նպատակներն իրագործելու, երկիրն ու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կործանելու, ցեղասպանությունն ու Արարատ սուրբ լեռան մասին հիշողությունն ու պաշտամունքը հայ ժողովրդի գիտակցությունից ու մտածողությունից արմատախիլ անելու համար լավ էլ համագործակցում է սատանայի հետ:

Կարդացեք՝ էջ 7

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 76 (4211), 14 մայիս, հինգշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

2022 թվականից շարունակվող հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ ուղիղ առեւտրի մեկնարկի բյուրոկրատական նախապատրաստական աշխատանքներն ավարտվել են՝ երեկ հայտարարեց Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը: Ըստ այդմ՝ Թուրքիայից երրորդ երկրների միջոցով Հայաստան մեկնող կամ նույն երթուղով ժամանող ապրանքների վրա այժմ, որպես վերջնական նշանակման կետ կամ ծագման երկիր, կարող է նշվել՝ «Հայաստան/Թուրքիա»: Հիշեցնենք. նախօրեին Երեւանի Շենգավիթ շրջանում քարոզարշավի ժամանակ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Նիկոլ Փաշինյանի ականջին շշնջում էր, թե՝ «վելքոմ» ասենք. «Թուրքերն այսօր բացում են, ողջունող տեքստ պատրաստենք»: Եվ երեկ ՀՀ ԱԳՆ-ն տարածեց ողջույնի տեքստը՝ նշելով, թե այս որոշումը Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորման գործընթացի հերթական արդյունքն է: Իսկ ինչ կտա այդ որոշումը Հայաստանին: Նախկինում Հայաստանը Թուրքիայի՝ ապրանքներ արտահանող կամ ներկրող երկրների ցանկում ներառված չի եղել, ուստի ապրանքները վերաարտահանել են Հայաստան, իսկ հիմա փոխվում է այդ հանգամանքը, եւ, ըստ մեր զրուցակից տնտեսվարողի, Թուրքիայից Հայաստան ապրանքների ներկրումը փոքր-ինչ կէժանանա, կշահեն ներկրողները: Փոխարենը կտուժի տեղական արտադրողը: Բայց այս չնչին հանգամանքը գործող իշխանությունները որպես աննախադեպ ձեռքբերում են ներկայացնում:

Մայիսի 16-ին՝ Ուսանողների եւ երիտասարդների օրը, Հանրապետության հրապարակում տեղի կունենա DJ փառատոն, որի կազմակերպիչը կրկին «Դոմինո փրոդաքշնն» է: Բեմում կլինի նաեւ Afrojack-ը: Միջոցառման գլխավոր հովանավորը Կասկադի կառուցապատող Գրիգոր Տեր-Ղազարյանի «Ջի Թի Բի հոլդինգն» է, հովանավորների թվում է նաեւ Էվոկաբանկը, որի բաժնետոմսերի 100%-ին միանձնյա տիրապետում է Մարետա Գեւորկյանը: Ի դեպ, ընտրությունների շեմին իշխանությունը տասնյակ մասշտաբային միջոցառումներ է կազմակերպում, հիմնականում՝ համերգներ եւ տոնակատարություններ, եւ այս շարքը ձգվելու է մինչեւ հունիսի 7-ը: Անգամ լռության ու ընտրության օրերին իշխանական թմբուկը չի լռելու՝ Գինու փառատոն են անելու: Նպատակը պարզ է՝ մարդկանց համար տեսարաններ ապահովել, որ գնան եւ ընտրեն իշխող ուժին, որն իրենց կյանքը տոնի է վերածել: Իսկ թե ինչ կլինի ընտրություններից հետո, հայ մարդը կսկսի մտածել հունիսի 7-ից հետո:

Անհամաչափ պայքար

Ինչի՞ համար է նախընտրական քարոզարշավը, ի՞նչ է մտածել մարդկությունը՝ ընտրություններից առաջ քարոզարշավ անելու գաղափարը ներդնելիս: Իմաստն այն է, որ թեկնածուներն ընտրողների հետ առավել ինտենսիվ շփվելու հնարավորություն ունենան, եւ այդ շփումները որոշակիորեն կանոնակարգված լինեն՝ բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ ապահովելով: Որպեսզի թեկնածուն կարողանա ներկայացնել իր ծրագիրն ու անձը, նկարագրի, թե ընտրվելուց հետո ինքն ինչ է պատրաստվում անել, եւ համոզի ընտրողին՝ իրեն ձայն տալ: Քարոզարշավի գաղափարը մեզանում հիմնովին վարկաբեկվել ու աղավաղվել է, եւ որոշ քաղաքական ուժեր կարծում են, թե այս մեկ ամիսը պետք է ծախսեն ոչ թե իրենց արժանիքները, այլ մրցակիցների թերությունները ներկայացնելու համար: Որ ոչ թե իրենց ծրագրերի ու անելիքների մասին պետք է խոսեն, այլ վիրավորեն ու վարկաբեկեն մյուսներին, որ նրանց իջած ռեյտինգի հաշվին իրենց ռեյտինգը բարձրանա: Այս հնարքից հատկապես օգտվում է Նիկոլ Փաշինյանը, որն այս 8 տարում խոսելու, քարոզչություն անելու, իր արժանիքներն ու անձը հանրությանը ներկայացնելու ոչ մի արգելք չի ունեցել, բայց հատկապես օգտվել է մրցակիցների վրա ցեխ շպրտելու հնարավորությունից: Իր լսարանն օգտագործել է բոլորին մեղադրելու ու վարկաբեկելու համար՝ հույս ունենալով, որ այդ ֆոնին ինքն ավելի լավը կերեւա: Նրա բոլոր գրառումներն ու ելույթները հազարավոր էջերում տարածվել են: Նա անարգել ատելության խոսք ու թշնամանք է տարածել իր էջով ու բարձր ամբիոններից: Ամենաանհեթեթ ու անթույլատրելի հայտարարություններն է արել, վիրավորել, հայհոյել տարբեր անձանց ու ինստիտուտներ: Պառակտել հանրությանը, նսեմացրել հայի արժեքներն ու անցած ուղին: Հիմա նույնպես դա է անում՝ արդեն քարոզարշավի շրջանակներում:

ՔՊ-ում ահռելի ֆինանսական միջոցներ են ծախսում նախընտրական քարոզչության վրա, սակայն անգամ մեծ փողերը չեն օգնում, որ մայրաքաղաքում ՔՊ-ի նկատմամբ քաղաքացիները գոնե լոյալություն դրսեւորեն: Մի քանի օր առաջ գրել էինք, որ վուլգար արտաքինով կանանց մայրաքաղաքի թաղերից մեկում բնակիչները, բառի բուն իմաստով, վռնդել են՝ թույլ չտալով, որ ՔՊ-ի բուկլետները բաժանեն, քարոզչություն անեն: Մեզ ասացին, որ բուկլետ բաժանողներից յուրաքանչյուրին 200-250 հազարական դրամ են տալիս՝ որպես վարձատրություն: Փաստորեն, իշխող թիմը, որ հազարավոր կուսակիցներ եւ համակիրներ ունի, իրականում նրանք ոչ թե գաղափարակիցներ են, այլ մեծ մասը՝ վարձու աշխատողներ, որոնք այս շրջանում ուզում են մի քանի դրամ փող աշխատել:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի՞Ց ՀԵՏՈ

Իշխանության շարքերում այս օրերին քննարկվող գլխավոր հարցն այն է, որ եթե, անկախ արդյունքներից, ՔՊ-ն հայտարարի իր հաղթանակի մասին, Ռուսաստանը, մեր ընդդիմությունը, հասարակությունը հունիսի 7-ից հետո ինչ քայլերի են դիմելու: Մասնավորապես, փողոցային շարժում կսկսվի՞, թե՞ ոչ, եւ ընդդիմությունը կկազմակերպի՞ այդ շարժումը՝ հրաժարվելով ճանաչել արդյունքները եւ վերցնել մանդատները: Այս հարցը հատկապես քննարկվում է իշխանական շրջանակներում, եւ ՔՊ-ականները խիստ մտահոգված են սրանով: Իշխանությունը պատրաստ է ամեն քայլի դիմել, անգամ արյուն թափել՝ իշխանություն վերցնելու համար, բայց իշխանական շրջանակներում կան մարդիկ, որոնք քաջ գիտակցում են, թե դա ինչ հետեւանքներով է հղի, եւ հասկանում են, որ սարքված ու խլված իշխանությունն ամենաթույլ իշխանությունն է, որը կախված է հազար ու մի հանգամանքներից: Գիտակցում են, որ եթե ընդդիմությունը չհաշտվի ընտրությունների արդյունքների հետ, որոշի չվերցնել մանդատները եւ պայքարը շարունակի փողոցում՝ ստեղծելով քաղաքական ճգնաժամ, ըստ իշխանականների, վաղ թե ուշ, արտաքին կենտրոններն էլ հաշվի կնստեն իրավիճակի հետ, եւ իրենց կարող է չներվել զոռբայությամբ իշխանազավթումը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄ ԿՍԿՍԻ, ԵԹԵ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԱ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՎԱՍԱՐ Է ԶՐՈՅԻ. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԴԱ ԹՈՒՅԼ ՉԻ ՏԱ

Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովը եւ Զելենսկու հայտարարություններն այն ռուբիկոնն էին, որից հետո ամենապրոհայկական տրամադրված գործիչներն անգամ Ռուսաստանում փոխեցին իրենց դիրքորոշումը: Կրեմլյան քարոզիչներն այլեւս ամենօրյա ռեժիմով քննարկում են Փաշինյան-Պուտին մոտակա «ապահարզանը»: Որքան էլ Փաշինյանը դեմ է այս ձեւակերպմանը, այն ավելի կոնկրետանում է, եւ հայկական թեման ՌԴ TV-ների եթերներում հաջորդում է ուկրաինականին: ՌԴ Դաշնության խորհրդի պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Չիժովը մայիսի 11-ին ՌԴ հանրային հեռուստաընկերության եթերում կոչ արեց՝ Ռուսաստանի ձայնը լսելի դարձնել յուրաքանչյուր հայի: «Հունիսի 7-ին Հայաստանում ընտրություններ են, եւ ԵՄ ամբողջ շրջիկ կրկեսը, որը եկել էր Երեւան, անում էր ամեն ինչ, որ ապահովի Փաշինյանի եւ նրա կուսակցության հաղթանակն ընտրություններում: Ահա ինչու հիմա, ընտրություններից առաջ մնացած այս մի քանի օրերին Ռուսաստանի ձայնը պետք է այնպես հնչի, որ դա հասնի յուրաքանչյուր հայ ընտրողի»,- ասաց նա: Պետդումայի փոխնախագահ Ալեքսանդր Բաբակովն էլ հայտարարեց. «Եթե հայ ժողովուրդն ինքնուրույն չի կարողանում ազդել Հայաստանի ղեկավարության որոշումների վրա, ապա տնտեսական քայլերը կարող են օգնել ՀՀ ղեկավարությանը՝ լսել Ռուսաստանի եւ սեփական ժողովրդի դիրքորոշումը»:

Ի՞նչ քայլեր սպասել Ռուսաստանից. լսել ենք ռուս քաղաքագետ, քաղաքագիտության դոկտոր **Միխայիլ Ալեքսանդրովին**, որին չի կարելի համարել Կրեմլի քարոզիչ, եւ որը սովորաբար օբյեկտիվ կարծիքներ է հնչեցնում:

- Լրագրողների հետ հանդիպման ժամանակ ՌԴ նախագահը շեշտեց, որ իրենք դեմ չեն լինի, եթե Հայաստանը որոշի դուրս գալ ԵԱՏՄ-ից: Քաղաքագետներն են անդրադառնում «քաղաքական ապահարզանին»: Ձեր կարծիքով, որքա՞ն հեռու կգնա Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու հարցում:

- Նախ՝ պրոպագանդիստների մասին. կհիշեք՝ Պուտինի ասուլիսի ժամանակ լրագրողը, որը տվել էր Հայաստանի մասին հարցը, ամեն կերպ փորձում էր նրան սադրել Փաշինյանի դեմ ագրեսիվ հայտարարությունների: Մինչ այդ Զելենսկին մեկնել էր Բաքու, եւ ոչ մի արձագանք Ռուսաստանի ԱԳՆ-ի կողմից չեղավ, եւ ոչ ոք նրան չդատապարտեց, չհաշված մասնավոր անձանց գնահատականները մամուլում: Ոչ մի պաշտոնական դատապարտում չեղավ մամուլում, չնայած Զելենսկին ստորագրել էր Ադրբեջանի հետ ռազմական համագործակցության համաձայնագիր: Պուտինին հատուկ տրվեց հարցը, որպեսզի նա քննադատի Փաշինյանին՝ Զելենսկու հետ հանդիպման համար, իսկ դա հետագայում կօգտագործվեր՝ ցույց տալու, որ Ռուսաստանը երկակի ստանդարտներ ունի՝ աչք է փակում Ալիեւի իրականացրած բեսպրեդելի վրա եւ քննադատում է Հայաստանին: Բայց Պուտինը, ի պատիվ իրեն, չտրվեց այդ սադրանքին: Զելենսկու, նրա այցի մասին նա ոչինչ չասաց, իսկ Փաշինյանին քննադատեց ոչ թե Զելենսկու հետ հանդիպման համար, այլ այն բանի, որ նա վարում է պրոարեւմտյան քաղաքականություն եւ պատրաստվում է մտնել ԵՄ: Այդ ասուլիսից հետո Պեսկովի լրատվամիջոցները՝ Պեսկովն է վերահսկում մեր ՁԼՄ-ները, սկսեցին շահարկել Զելենսկու այցի թեման: Նրանց դուր չեկավ, որ Պուտինը չսրեց Զելենսկու այցի խնդիրը Երեւան եւ Բաքու, եւ նրանք սկսեցին ուռճացնել Զելենսկու հայտարարությունների թեման: Փաշինյանը դրան չարձագանքեց, թեեւ ակնհայտ էր, որ դա ընդհանուր նշանակության միջոցառում է, եւ Փաշինյանը չէր կարող Զելենսկու բերանն այդտեղ փակել: Նա ինչ ասես, կարող էր ասել:

- Բայց Զախարովան էլ ասաց, որ Հայաստանը պետք է արձագանքեր, երբ Զելենսկին խոսեց Կարմիր հրապարակում իր դրոնների ներկայության մասին:

- Հետո, իհարկե, այո: Զելենսկու հայտարարությունից հետո Հայաստանը պարտավոր էր արձագանքել, եւ այդ քննադատությունն արդարացի էր: Հայաստանը մեր դաշնակից երկիրն է: Ադրբեջանն էլ է դաշնակից, բայց բոլորը հասկանում են, որ Ադրբեջանը ՀԱՊԿ անդամ չէ, ԵԱՏՄ անդամ չէ, նրա հետ համաձայնագրում չկա ռազմական փոխօգնության մասին կետ: Ադրբեջանը բավականին պայմանական դաշնակից է եւ կարող է Ռուսաստանի հանդեպ նման բաներ թույլ տալ, բայց Հայաստանից ռեակցիա էր սպասվում, որը չեղավ Փաշինյանի կողմից: Բայց կային հայտարարություններ, թե Փաշինյանը Զելենսկուն ամբիոն էր տրամադրել Ռուսաստանի վրա հարձակումների համար եւ այլն... Դրանք բացարձակ անարդար պնդումներ են: Ինչպե՞ս կարող էր Փաշինյանը չտրամադրել ամբիոն, եթե Զելենսկին եկել էր մասնակցելու այդ միջոցառմանը: Առհասարակ, այդ միջոցառումը Փաշինյանի համար այլ նշանակություն ուներ՝ ընտրություններից առաջ բարձրացնել իր շանսերը, բայց, իմ կարծիքով, դա այնքան էլ չստացվեց:

- Մենք այս պահին շատ կախյալ ենք Ռուսաստանից, եւ այդ այցից հետո Հայաստանում հոռետեսություն կա՝ գազի թանկացումից ու միգրանտների արտաքսումից մինչեւ ատոմակայանի կանգնեցում, ուրանի մատակարարման դադարեցում:

- Կարծում եմ՝ Ռուսաստանում արդեն կոնսենսուս է ձեւավորվել անգամ նրանց շրջանում, ովքեր Հայաստանին լավ են վերաբերվում, որ եթե Փաշինյանը վերընտրվի, միեւնույն է՝ Հայաստանին տանելու է դեպի Արեւմուտք: Հայ հասարակությունը չի դիմադրելու, եւ Հայաստանի վերակողմնորոշումը դեպի Արեւմուտք անխուսափելի է լինելու, ուստի Ռուսաստանի համար իմաստ չկա շարունակել վճարել Փաշինյանի արեւմտյան կողմնորոշման համար: Բոլոր արտոնությունները Հայաստանից կխլվեն, գազի գինը կբարձրանա, միգրանտների նկատմամբ խստացումներ կլինեն, ապրանքների նկատմամբ, որոնք այստեղ են գալիս, սահմանափակող մաքսատուրքեր կկիրառվեն՝ ժամանակի հետ: Ատոմակայանի հետ կապված՝ այնքան էլ վստահ չեմ. մենք պայմանագիր ունենք, որը Ռուսաստանը կպահպանի: Ինչպե՞ս կարող ենք կանգնեցնել ատոմակայանը: Մենք երբեք այդպես չենք վարվում: Անգամ ՆԱՏՕ-ի անդամ Բուլղարիայի հետ մենք այդպես չենք վարվում, այնտեղ էլ ենք ուրան մատակարարում, սպասարկում կայանը: Կարծում եմ, կայանի հետ կապված՝ չարժե անհանգստանալ, բայց առեւտուրը, միգրացիան եւ էներգառեսուրսների մատակարարման սահմանափակումներ անպայման կլինեն: Եթե Հայաստանում որեւէ մեկը կարծում է, թե Ադրբեջանը Հայաստանին պահելու է, Հայաստանի ծախսերն իր վրա է վերցնելու, խորապես սխալվում է:

- Մայիսի 28-ին լինելու է ԵԱՏՄ հերթական նիստը, Փաշինյանը չի մասնակցի, թեեւ Պուտինն ասել է, թե մինչեւ այդ նիստը ժամանակ է տալիս, որպեսզի որոշում ընդունվի: Հնարավո՞ր է, որ Ռուսաստանը եւ ԵԱՏՄ մյուս անդամ երկրները միակողմանիորեն դադարեցնեն Հայաստանի անդամությունը: Փաշինյանը եւ Արարատ Միրզոյանն ասում են, որ մենք ենք ընտրելու ընտրության պահը:

- Պուտինը, հավանաբար, ցանկանում էր այդ նիստի ժամանակ ընդունվելիք որոշումը նաեւ Փաշինյանի հետ քննարկել, բայց Փաշինյանը որոշեց չներկայանալ նիստին: Անկախ նրա ներկայությունից, քննարկումը կայանալու է: Կարող են Հայաստանը հեռացնել ԵԱՏՄ-ից, թե ոչ՝ չեմ կարող ասել, իրավական տեսանկյունից պետք է նայել, բայց ամեն երկիր կարող է սահմանափակումներ մտցնել առեւտրի, միգրացիայի հարցերում: Բացի դա՝ Ռուսաստանը կարող է անել քայլեր, որոնք չեն վերաբերում ԵԱՏՄ-ին: Օրինակ, գազի մատակարարումը սուբսիդավորված գներով՝ զուտ Ռուսաստանի բարի կամքն է: Իհարկե, այդ միջոցները կկիրառվեն, եթե Փաշինյանը վերընտրվի: Իսկ եթե չվերընտրվի, հարցն ինքնին կվերանա, քանի որ, որքան գիտեմ, ձեր ընդդիմությունը չի ձգտում ԵՄ մտնել, եւ ամեն ինչ կկարգավորվի:

- Փաշինյանը մեր ժողովրդին պատերազմով է սպառնում: Եթե չհաղթի ընտրություններում, եւ եթե Ադրբեջանն իրոք հարձակվի, ինչպե՞ս կպահի իրեն Ռուսաստանը:

- Ադրբեջանն ավելի շուտ պատերազմ կսկսի, եթե Փաշինյանը մնա իշխանության: Նա նորանոր զիջումներ կպահանջի նրանից, քանի որ այդ տակտիկան արդեն արդյունք է տվել, Փաշինյանն անընդհատ գնում է զիջումների: Եվ Տավուշում, եւ Սահմանադրությունն է պատրաստվում փոխել, եւ 300 հազար ադրբեջանցիներին է մտադիր ներս թողնել Հայաստան, եւ ցեղասպանության ճանաչումն է չեղարկել, Արցախն է ուրանում: Եթե Հայաստանը նոր ղեկավար ունենա, Ռուսաստանը, իհարկե, կաջակցի՝ թույլ չի տա, որ Ադրբեջանը պատերազմ սկսի: Հավանականությունը, որ Ադրբեջանը պատերազմ կսկսի, եթե իշխանության գա ընդդիմությունը, հավասար է զրոյի: Իսկ Փաշինյանին չէին վստահում՝ հաշվի առնելով այն ամենը, որ նա ասում ու գրում էր Ռուսաստանի մասին՝ դեռ լինելով ընդդիմադիր: Այդ ամենը հայտնի է եղել, եւ ռուսական իշխանությունը նրան միշտ է կասկածանքով վերաբերվել: 2022-ին, երբ Ադրբեջանի հետ սահմանին կոնֆլիկտներ առաջացան, եւ Հայաստանը դիմեց ՀԱՊԿ-ին, Ռուսաստանի ղեկավարությունը, հավանաբար, տպավորություն ուներ, որ Փաշինյանը փորձում է նրան ներքաշել Ադրբեջանի հետ պատերազմի մեջ՝ այն պայմաններում, երբ մենք այն ժամանակ լարված իրավիճակ ունեինք ռազմաճակատում: Նահանջում էինք Խարկովի տակից, ստիպված էինք Խերսոնից դուրս գալ, հետո մեզ մոտ մոբիլիզացիա հայտարարեցին, որովհետեւ զինվորների պակաս կար ռազմաճակատում: Հենց այդ շրջանում սկսվեցին Հայաստանի կոնֆլիկտներն Ադրբեջանի հետ սահմանին: Եթե այդ ժամանակ Հայաստանի իշխանության ղեկին այլ անձ լիներ, Ռուսաստանի ռեակցիան այլ կլիներ 22 թվականին:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԱՂԲԱՎԱՅՐԸ ՀՐԴԵՀԻ ՄԵՋ Է, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ՝ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ

Մայիսի 12-ին, ժամը 18.20-ի սահմաններում Հայաստան-Վրաստան ճանապարհի՝ Դիլիջանից Ճամբարակ տանող խաչմերուկով ընթացող քաղաքացիները նկատել են, որ միջպետական ավտոճանապարհի մի մեծ հատված պատված է ծխով: Պարզվել է՝ հերթական անգամ Դիլիջան համայնքի աղբավայրն է այրվում: Այդ աղբավայրը միջպետական ավտոճանապարհի նշված հատվածում է՝ ավտոճանապարհից վերեւ է գտնվում: Դիլիջան համայնքի ղեկավար, ՔՊ կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը մայիսի 8-ից նախընտրական արձակուրդի մեջ է, ՔՊ կուսակցության քարոզչական բուկլետներն է անձամբ բաժանում, համայնքի բնակիչներին կոչ անում՝ հունիսի 7-ին քվե տալ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Դավիթ Սարգսյանը՝ որպես Դիլիջան համայնքի ղեկավար պաշտոնավարելու 5 տարվա ընթացքում գոնե չի ցանկապատել համայնքի աղբավայրը, որպեսզի դիլիջանցիների կովերը չարածեն այնտեղ եւ թունավոր նյութերով սնվելով՝ քիմիական նյութերով հագեցած ու վնասակար կաթ չտան դիլիջանցիներին: Իսկ աղբավայրը պարբերաբար այրվում է՝ ապականելով հանգստավայրի օդն ու բնությունը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Եկեղեցու թեմայի վրա վետո են դրել

Իշխանությունը վերջերս հերթական ներքին հարցումն է արել եւ պարզել, որ Հայ առաքելական եկեղեցին, անգամ այսքան հարվածներից ու հետեւողական վարկաբեկումից հետո, Հայաստանում ամենաբարձր վստահություն վայելող կառույցն է: Հենց այդ պատճառով էլ հրահանգ է իջել թիմին, որ այլեւս շատ չխոսեն ՔՊ նախընտրական ծրագրում Հայ առաքելական եկեղեցու դեմ տեղ գտած դրույթների մասին, որոնք, իրականում, հակասահմանադրական դրույթներ են: ՔՊ կուսակցության նախընտրական ծրագրում, հիշեցնենք, նշված է, որ պետք է փոխեն Եկեղեցու փաստացի պետին, այսինքն՝ կաթողիկոսին: «Արժեքահեն հոգեւոր կյանք ունենալու խնդրի լուծման համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարենորոգումը կենսական անհրաժեշտություն է: Վերջին տասնամյակներում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի ղեկավարության գործունեության հետեւանքով հավատավոր հանրությունն օտարվել է եւ շարունակում է օտարվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց, ինչը, այդ թվում, հոգեւոր անվտանգության խնդիր է, քանի որ դա հնարավորություն է ստեղծել, որ արտաքին ուժերը փորձ անեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին դարձնել Հայաստանի Հանրապետության անկախության, ինքնիշխանության դեմ հիբրիդային պայքարի հենակետ: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը պաշտպանում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարենորոգման օրակարգը եւ որդեգրում է ճանապարհային հետեւյալ քարտեզը՝ ա) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետի հեռացում (հանգստի կոչում), բ) Սահմանված կարգով Կաթողիկոսական տեղապահի ընտրություն, գ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կանոնադրության ընդունում. Կանոնադրությամբ պետք է սահմանվեն ամրագրված սկզբունքների պահպանման, ֆինանսական թափանցիկության եւ հոգեւորականների բարեվարքության ապահովման կառուցակարգեր, դ) Սահմանված կարգով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություն»,- ասված է նախընտրական ծրագրում: Իշխող թիմում, կարելի է ասել, վետո է դրվել այս հարցի արծարծման վրա, հաշվարկով, որ հունիսի 7-ի ընտրություններից հետո, երբ հաղթեն, նոր կբարձրաձայնեն, որ իրենց հակաեկեղեցական ծրագրի իրագործմանն են նաեւ հավանություն ստացել, ուստի նոր տողից եւ ավելի հուժկու գրոհ կսկսեն Վեհափառի եւ Եկեղեցու դեմ:

ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏՆ ԱՅՍՕՐ ԱՎԵԼԻ Է ՔՊ-ԱԿԱՆԱՑՎԵԼ, ՔԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀՀԿ-ԱԿԱՆԱՑՎԱԾ ԷՐ

ՔՊ-ի նախընտրական ցուցակը վառ ապացույցն է այն բանի, թե ինչպես է իշխող ուժը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, կուսակցականացրել պետական եւ պետականամերձ ապարատը: ՔՊ նախընտրական ցուցակում են բուժհաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, ՊՈԱԿ-ների, կոմիտեների ղեկավարներ, ՀԷՑ մասնաճյուղերի ղեկավարներ եւ, որ ամենաաբսուրդն է՝ ապաքաղաքական համարվող կառույցների՝ դպրոցների տնօրեններ: Ընդ որում՝ բոլորը կուսակցականներ են: Թե ինչու պիտի ոչ քաղաքական այս պաշտոնները զբաղեցնեն կուսակցականները, շատ պարզ է. նրանք այդ պաշտոններում նշանակվել են նախապայմանով, որ կդառնան իշխող ուժի անդամ ու կծառայեն իշխանությանը կամ էլ կշարունակեն այդ պաշտոններում իրենց աշխատանքը, եթե անդամագրվեն ՔՊ-ին: Սա ընտրություններում պետական եւ պետականամերձ ապարատն իշխանության օգտին շահագործելու պարզ մեխանիզմ է:

Օրինակ, ՔՊ պատգամավորության թեկնածու, Գյումրու չկայացած քաղաքապետ Սարիկ Մինասյանը ՀԷՑ «Ղարս» մասնաճյուղի տնօրեն նշանակվելուց հետո կադրային ջարդ է արել ու նշանակել իշխանականներին: Հիմա էլ զգուշացրել է՝ եթե բոլորդ մեկ մարդու պես չընտրեք ՔՊ-ին, կկորցնեք աշխատանքը: Չնայած հասկանալի չէ, թե ինչպես են վերահսկելու տարբեր ընտրատեղամասերում ընտրող մարդկանց քվեարկության արդյունքները: Այս սկզբունքով են գործում նաեւ մյուս բոլոր ՔՊ-ական տնօրեններն ու հիմնարկների ղեկավարները:

Մենք հաշվեցինք, որ ՔՊ նախընտրական ցուցակում բժշկական հիմնարկների 12 տնօրեն եւ փոխտնօրեն են ընդգրկված, ՊՈԱԿ-ների 8 ղեկավար, ՀԷՑ ղեկավար պաշտոններ զբաղեցնող 5 անձ, դպրոցի 10 տնօրեն, կոմիտեների 4 ղեկավար:

Իշխող ուժի ցուցակում են «Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ տնօրեն Նարեկ Զեյնալյանը՝ ՔՊ-ական նախկին պատգամավորը, որը մեկուկես տարի առաջ հլու-հնազանդ կատարեց Փաշինյանի sms-հրահանգը եւ վայր դրեց մանդատը: Ցուցակում է «Նորք-Մարաշ» ԲԿ փոխտնօրեն Հայկ Միրզոյանը: Հիշեցնենք, որ ԲԿ տնօրեն Միքայել Ադամյանն էլ էր մասնակցում պատգամավորության թեկնածության քասթինգներին, սակայն երկքաղաքացի լինելու պատճառով չընդգրկվեց ցուցակում: Իշխանության հետ են «Արթիկ», «Քաջարան» ԲԿ-ների տնօրեններ Բաբիկ Մարտիրոսյանն ու Արմեն Ղահրամանյանը, Սիսիանի հվանդանոցի տնօրեն Անիկ Գրիգորյանը, Վանաձորի ԲԿ տնօրեն Մեսրոպ Հազրոյանը, Տաշիրի եւ Գորիսի ԲԿ տնօրեններ Հասմիկ Խռոյանն ու Դավիթ Մաշուրյանը, Ապարանի ԲԿ պոլիկլինիկայի փոխտնօրեն Սեւակ Սաֆարյանը, Ալավերդու ԲԿ տնօրեն Լորա Սարգսյանը: Նման քանակի բժիշկներ ու հիվանդանոցների տնօրեններ երբեք չեն եղել ՀՀԿ-ի ցուցակներում:

Անգամ ապաքաղաքական կառույցների՝ դպրոցի տնօրենների պաշտոններում են ՔՊ-ականների նշանակել, որոնք այժմ նախընտրական ցուցակում են հայտնվել: Ցուցակում են Իջեւանի թիվ 1 դպրոցի տնօրեն Մանե Ղազումյանը, Սյունիքի մարզի Խոտ համայնքի դպրոցի տնօրենի տեղակալ Լիանա Ղազարյանը, «Վեդիի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Մելինե Եղիգյանը, Գյումրու Նիկողայոս Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոցի տնօրեն Գայանե Ղուկասյանը, Երեւանի Ռաֆայել Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի տնօրեն Աննա Մարգարյանը, «Դպրոցականներին սնունդ եւ երեխաներին բարեկեցություն» հիմնարկի տնօրեն Սաթենիկ Մկրտչյանը, Սյունիքի մարզի Շինուհայրի դպրոցի տնօրեն Ժաննա Բարսեղյանը, Երեւանի Աղասի Խանջյանի անվան դպրոցի տնօրեն Լիլիթ Մովսիսյանը, Ապարանի Մ. Ասատրյանի անվան մարզադպրոցի փոխտնօրեն Կարինե Գեւորգյանը, Հակոբ Կոջոյանի անվան դպրոցի հանրահայտ տնօրեն Ռուզաննա Երեմյանը:

ՔՊ ցուցակում են նաեւ Կադաստրի պետական կոմիտեի ղեկավար, իր աշխատակցի ամուսնու ծեծը կազմակերպելու պատմությամբ հայտնի դարձած Սուրեն Թովմասյանը, էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի ղեկավար Լուսինե Գեւորգյանը, քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վարդանյանը, ջրային կոմիտեի նախագահ Արամազդ Ղալամքարյանը:

Պետական ապարատն ու դպրոցները կուսակցականացնելու համար նախկիններին բզկտող Նիկոլ Փաշինյանն այս հարցում էլ կատարելագործել, ծաղկեցրել է ՀՀԿ-ի հիմնած ավանդույթները:

Նյութերը՝ Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ

ՄԵՐ ԲԱԺԻՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ, ՑԱՎՈՔ, ԹՈՒՐՔԻԱՆ Է

Մեր զրուցակիցը քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանն** է:

- Տպավորություն է, որ հանրությանը չի հետաքրքրում, թե որ քաղաքական ուժն ինչ ծրագիր է ներկայացնում: Մարդիկ, առհասարակ, այլեւս չեն էլ հավատում, թե ով ինչ խոստումներ է տալիս: Դուք նկատել եք նման բան, ո՞րն է պատճառը:

- Այո, նկատել եմ, որ կա նման երեւույթ, եւ այն ունի հստակ բացատրություն: Մարդիկ, ոմանք՝ գիտակցաբար, ոմանք՝ ոչ գիտակցաբար, հասկացել են, որ, կուսակցությունների մեծ թիվը չհաշված, մեծ հաշվով, ընտրելու շատ բան չկա: Մարդիկ բաժանված են երկու մասի: Մի մասը համակերպվել է Հայաստանի այս պարտված իրավիճակի հետ եւ վայելում է կյանքը, եւ կան մարդիկ, ովքեր ոչ մի գնով չեն համակերպվում այս իրողությունների հետ եւ գտնում են, որ պետք է պայքարը շարունակել, պետք է դիմադրել: Ընտրություններին մասնակցող մարդիկ բաժանված են երկու հստակ խմբերի, եւ նրանց շատ քիչ է հետաքրքրում երրորդ, չորրորդ, հինգերորդ խնդիրների մասին լսելը:

- Բայց 2021-ին պարտության եւ պատերազմի վերքը թարմ էր: Ինչո՞ւ այն ժամանակ ծրագրերի նկատմամբ անտարբերություն չէր նկատվում:

- Որովհետեւ այն ժամանակ ծրագրերը հետաքրքրում էին մարդկանց, ինչու՝ որովհետեւ գրեթե բոլոր քաղաքական ուժերը, մեծ հաշվով, ասում էին նույն բանը՝ անգամ իշխանությունները: Բոլորն ասում էին, որ Արցախը պետք է անջատվի հանուն փրկության, որ Հայաստանը պետք է մնա որպես Արցախի անվտանգության երաշխավոր, ասում էին, որ Հադրութը եւ Շուշին պետք է դեօկուպացվեն, եւ այսպես շարունակ: Ուղղակի այդ ժամանակ քաղաքական ուժերի կողմից առաջարկվող տարբերակներն էին այլ, բայց գաղափարը նման էր: Դա է պատճառը, որ 2021-ին մարդիկ ծրագրերի միջեւ էին կատարում իրենց ընտրությունը, իսկ այժմ ճամփաբաժանը լրիվ այլ է: Ծրագրերն այլեւս էական չեն: Շատերը մտածում են՝ ընտրություններից հետո Հայաստան լինելո՞ւ է, թե՞ չի լինելու: Խոսքը սրա մասին է: Մի մասն ասում է, որ Հայաստանը դառնալու է ռուսական գուբերնիա, մի մասը կարծում է, որ Հայաստանը դառնալու է թուրքական վիլայեթ: Այս օրերին Ռուսաստանից կոշտ պարտադրանքներ են դնում մեզ վրա, անգամ հիշեցնում են ուկրաինական Մայդանը: Այստեղից եւս պարզ է դառնում, որ հասարակությունը նորից ու նորից երկու հիմնական մասի է բաժանվել: Ոմանք համարում են, որ ռուսները մեզ սպառնում են, թե Հայաստանը կարող է դառնալ Ուկրաինա: Ոմանք էլ կարծում են, որ Ռուսաստանն ուղղակի զգուշացնում է, որ Արեւմուտքը Հայաստանը կդարձնի Ուկրաինա: Այսինքն՝ ստացվում է, որ երկու դեպքում էլ Հայաստանի ուկրաինացման հեռանկարը բավականին լուրջ է, եւ դրա հետ համակարծիք են բոլոր կողմերը, սակայն խնդիրն այն է, թե ով Հայաստանը կդարձնի Ուկրաինա:

- Մտավախություն կա, որ Հայաստանը կարող է կորցնել պետականությունը, քանի որ կամ ռուսացման, կամ թուրքացման է գնալու: Որքանո՞վ է Հայաստանի՝ ՌԴ-ին միանալու վտանգն իրատեսական:

- Նման օրակարգ չկա: Հայաստանը չի կարող դառնալ Ռուսաստան, այլ հարց է, որ կարող է ռուսական ազդեցության գոտին ավելի խորացվել: Նույնը Թուրքիայի պարագայում է: Պարզ է, երբ խոսում ենք թուրքական վիլայեթ դառնալու մասին, դա ասում ենք փոխաբերական իմաստով: Հայաստանը, այսպես թե այնպես, իր ինքնիշխանությունը պահպանելու է, հարցն այն է, թե ում ազդեցության գոտում ենք հայտնվելու: Այժմ իշխանությունները մանիպուլացնում են հասարակությանը եւ փորձում են ներկայացնել, թե իբրեւ ընտրությունը ԵՄ-ի եւ ԵԱՏՄ-ի միջեւ է, սակայն իրականում ընտրությունը ԵԱՏՄ-ից դուրս գալու եւ թուրք-ադրբեջանական տնտեսական կախվածության մեջ է: Հայաստանը տեսանելի ապագայում չունի ԵՄ մտնելու հեռանկար: Մեր բաժին Արեւմուտքը, ցավոք, Թուրքիան է: Ռուսական գազը չի փոխարինվելու նորվեգական գազով, այլ փոխարինվելու է ադրբեջանականով:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՐ ԿՅԱՆՔԸ ՆԱԻՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ԿՈՂՔԻ ԿԱՄԵՐՈՒՄ Է ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

*«Հրապարակի» զրուցակիցը «Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու **Միհրդատ Մադաթյանն** է:*

- Փաշինյանը նորից մտել է իր երբեմնի՝ «ժողովրդի» զավակի կերպարի մեջ, ելույթ ունենալուց ձայնն է խզվում, մարդկանց բուկլետներ ու իր Հայաստանի քարտեզի կրծքանշանն է բաժանում: Ինքնավստահություն կա՞, թե...

- Տագնապի մեջ է Փաշինյանը, ինքնավստահության նշույլ անգամ չկա: Եթե ուշադիր լինեք նրա ռեակցիաներին, իր այդ հիստերիկ պահվածքին, հատկապես տագնապի մեջ է ընկնում այն իրավիճակներում, երբ տեսնում է, որ փողոցում իրեն չեն ընդունում, բուկլետները չեն վերցնում, մոտիկ չեն գալիս: Որոշ մարդիկ վերցնում են, բայց հասկանում է, որ վերցնում են, որովհետեւ կամ տարիքով փոքր են, կամ կոնֆլիկտի չեն ուզում գնալ: Այս Փաշինյանը, որին մենք տեսնում ենք, վերջնական հիստերիայի մեջ գտնվող Փաշինյանն է, որ փորձում է իրացնել իր վերջին շանսը, ամեն գնով, գոնե ինչ-որ ձեւի ընտրություններում մաքսիմալ ինչ-որ բան ստանալու: Ես կարծում եմ, որ ինքը նույնիսկ անգիտակցաբար համոզված է, որ իր ուզած քվեները չի ստանա:

- Իսկ թիմակիցների, ՔՊ-ականների հայտարարությունները խոսում են այն մասին, որ Փաշինյանին հաջողվել է համոզել նրանց, որ անվերապահ դեպի հաղթանակ են գնում:

- Եկեք դասակարգենք այդ թիմակիցներին: Եթե թիմակից ասելով նկատի ունենք ալենսիմոնյանական, արարատմիրզոյանական, արսենթորոսյանական մասսան, որոնք չունեն կարմիր գծեր, արժեքներ, բացառապես շարժվում են սեփական էգոիզմով, ապա ես կարծում եմ, որ նրանք շատ լավ հասկանում են, որ իրենք հոգեվարքի մեջ են: Եթե խոսքը գնում է մյուս թիմակիցների մասին, որոնք կյանքում իրենցից ոչ մի բան չեն ներկայացրել, ոչ էլ ներկայացնելու են, իրենց համար Ղարաբաղ հանձնելը, Թուրքիայի հետ առեւտուր անելը խաղ է, լայվեր են մտնում ու այսպես անցնում են առաջ: Փաշինյանը շատ լավ պատկերացնում է, որ եթե 51 տոկոս չի հավաքում, ապա ընդդիմադիր դաշտը, որը 51 տոկոս հավաքելու է, մի քանի օրվա մեջ սահմանադրական մեծամասնություն է ունենալու:

- Այսինքն:

- Այսինքն, ինքը չունի այն թիմը, որը գաղափարական կլինի ու կմնա, թիմն առաջին պատեհ առիթի դեպքում թողնելու է՝ գնա ավելի հարմար պայմաններով ավելի լավ միջավայր:

- Վախից դրդված:

- Վախից, կոմֆորմիզմից, շահադիտական դիրքորոշումներից, որովհետեւ ամբողջ ՔՊ-ն հիմնված է վախի, կոմֆորմիզմի եւ շահադիտական դիրքորոշումների վրա:

- Տագնապի մեջ գտնվող մարդուն նույն վախը կարող է մղել անհավանական արարքների: Հնարավո՞ր է ընտրություններից առաջ կամ հետո Փաշինյանը գնա այնպիսի քայլերի, որոնք շատ լուրջ հետեւանքներ թողնեն:

- Եթե մենք դիտարկում ենք Փաշինյանին՝ ոչ թե հնարավոր է, այլ հավանականությունը մեծ է, բայց պիտի հասկանանք, որ Փաշինյանն անձամբ ոչ մի բան անել չի կարող, ամենաշատը՝ կարող է հրահանգել, եւ այդ հրահանգը պիտի կատարվի: Ես հույս ունեմ, որ այդ հրահանգ ստացողներն այնքան ադեկվատություն կունենան, այնքան մարդասիրություն կունենան, որ չեն գնա այդ քայլին: Ես համոզված եմ, Փաշինյանը հրահանգելու է, չգիտեմ՝ բանակին, ոստիկանությանը, Պողոսին, Կիրակոսին, ընթացքը դա ցույց կտա, եւ շատ մոտ ապագայում: Մինչեւ արյունահեղության Փաշինյանը գնալու է՝ իր աթոռը պահելու համար:

- Հասարակ քաղաքացիները չեն վախենում իրենց անհամաձայնությունը հայտնել Փաշինյանին, ոմանք՝ վիճել նրա հետ: Նույնիսկ իր կողմնակիցներից են ասում՝ մենք Ձեզ շատ ենք սիրում, բայց խնդրում ենք, մի փոքրացրեք Հայաստանը: Մատրիցա՞ն է կոտրվել, ինչի՞ մասին է սա խոսում:

- Դուք նայում եք այն օբյեկտիվին, որը տալիս է այդ քաղաքացու եւ Փաշինյանի զրույցը, եթե մի 15 մետր էլ լայնացնեք, կտեսնեք հարյուրավոր ոստիկանների, որոնք շրջափակում են Փաշինյանին այդ տարածքում եւ մոտ չեն թողնում կամայական մարդու: Այսինքն, մենք տեսնում ենք, որ այդ բողոքող մարդը տարբեր ֆիլտրերի միջով անցած մարդ է: Եթե չլինեին այդ ֆիլտրերը, բողոքողները հազարավորներ ու հարյուրավորներ կլինեին: Չկա այդպիսի մարդ, որ չտեսնի, թե Փաշինյանին ինչ քանակի մարդ է շրջապատում թե՛ ոստիկանությունից, թե՛ գվարդիայից, թե՛ ՊՊԾ-ից, թե՛ սնայպերներ:

- Այսինքն՝ վախերի իրական պատճառ ունի, թե՞ դրանք իր մեջ ձեւավորված անհիմն վախեր են:

- Տեսեք, ինքը վախեր ունեցել է, ինքը ծնվել է վախերով, ինքը վախեր ունենալու է, ամբողջ կյանքը ապրելու է վախերով, իսկ ես, անկեղծ ասեմ, չէի ուզի 5 օր ապրել Փաշինյանի կյանքով, չէի ուզի: Ինքը գերադասում է այդ վախերով, այդ ախրանայով, պաշտպանված տարածքից լայվ մտնի ու ասի՝ ուժեղ տղերք, ու ասի մի տեղից, որտեղ օձն իր պորտով չի կարող մտնել ու այդտեղից հաթաթա տալ: Սա Փաշինյանի էությունն է: Ուժեղ տղերք ասողը պիտի սպորտային շորերը հագած՝ հրապարակ գար կամ սպորտդահլիճ գնար՝ առանց ախրանայի, մարդիկ կգնային ու ցույց կտային, թե ուժեղ տղան ով է: Կամ էլ ինքը չպիտի մտներ այդ դաշտ, սա նման է գողական ոստիկանի: Սա նույնիսկ աբսուրդ է, չէ՞: Եթե դու ոստիկան ես, պիտի պայքարես գողականի դեմ: Փաշինյանի մասին խոսելիս մենք պետք է բացառապես վախերի մասին խոսենք: 90-ականներից Փաշինյանը եղել է իմ ճանաչած ամենավախկոտ մարդկանցից մեկը, ես իրենից վախկոտ մարդ չեմ հանդիպել իմ կյանքում, իր վախերից շատ վախեր ունեցող մարդ չեմ հանդիպել իմ կյանքում, հասկանո՞ւմ եք: Մի որպե՞ս պատկերացրեք հունիսի 8-ը, երբ ինքը պարտվել է, երբ ընդդիմությունը եկել է իշխանության, ի՞նչ է անելու Փաշինյանը: Ինքը վախեր ունի, որովհետեւ իր մնացյալ կյանքն անցկացնելու է Նաիրի Հունանյանի կողքի կամերում: Իրավաբանները երբ սկսեն զբաղվել այս հարցերով, պատկերացնո՞ւմ եք, թե վաղը ինչեր աղում է տարբեր ուտելիքներ: Այն օրը մեկն ասաց՝ լավ եք անում, որ պեռաշկի եք ուտում, բայց հայրենիքը մի հանձնեք: Այլեւս չեն աշխատում իր այդ քայլերը: Կամ՝ 41 անգամ կրկնել՝ դու ես այդ մարդը, չի նշանակում, թե 41 ձայն ավելացավ: Դա դարձավ մեմ, ծիծաղի առարկա, բայց չաշխատեց, առաջին անգամն աշխատեց՝ հիմա չի աշխատում: Մեր ժողովուրդը հիմար չէ, ապուշ չէ: Տպավորություն է, որ այս իշխանությունը ժողովրդին դրել է խոր մտավոր հետամնացի տեղ, որ կարելի է էլի խաբել, հետո՝ էլի, էլի, որը երբեք չի հասկանալու, որ իրեն խաբում են: Ես համոզված եմ, որ ժողովուրդն այդպիսին չէ, վախի մթնոլորտ, այո, սերմանել է, համոզվածություն ընտրություններում՝ զրոյական: Դրա վկայությունն այն է, որ փոխանակ ինքն իրեն գովազդի, փորձում է ընդդիմադիր հակառակորդներին պախարակել:

Հայկա ԱԼՈՅԱՆ

17 ՕՐՈՒՄ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՑԵԼ ԱՄՓՈՓԵԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դանրակրթական դպրոցներում ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը մեկնարկել է 2021 թվականին: Անցած հնգամյակում ուսուցիչներից բազում դժգոհություններ եղան ատեստավորման ժամանակի սղության, տրված հարցերի խրթինության, դասավանդվող առարկային առնչության եւ այլնի վերաբերյալ: ԿԳՄՍ նախարարությունն ատեստացիայի գործընթացում սրբագրումներ արեց, իջեցրեց անցողիկ միավորի շեմը, կրկնակի ատեստավորումներ կազմակերպեց եւ այլն: Չնայած դրան՝ հանրակրթական դպրոցների բազմաթիվ ուսուցիչներ 2 եւ ավելի անգամ բացասական գնահատական են ստացել կամավոր ատեստավորման ժամանակ: Մայիսի 5-ին ԿԳՄՄՆ-ին հարցում էի արել ապրիլի 26-ին նախատեսված ատեստացիայի լրացուցիչ փուլի մասին, որը նախատեսված էր այն ուսուցիչների համար, ովքեր նախկինում 2 եւ ավելի անգամ բացասական արդյունք են ունեցել կամավոր ատեստավորումից: Հարցրել էի. «Լրացուցիչ ատեստացիան կամավո՞ր, թե՞ պարտադիր է եղել նախկինում 2 եւ ավելի անգամ բացասական արդյունք ունեցած ուսուցիչների համար: Քանի՞ ուսուցիչ է մասնակցել այս փուլին, քանի՞սն է դրական արդյունք ունեցել, բացասական արդյունք ունեցած ուսուցիչները շարունակելո՞ւ են աշխատել հանրակրթական դպրոցներում»: Մայիսի 12-ին ստացել եմ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի ստորագրությամբ պատասխան. «Հաշվի առնելով կամավոր ատեստավորման միջոցով ուսուցչի մասնագիտական աճին նպաստելու գործընթացի կարեւորությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախատեսել էր 2026 թ. ապրիլի 25-ին շուրջ 200 ուսուցչի համար կազմակերպել կամավոր ատեստավորման լրացուցիչ փուլ, որոնք երկու անգամ (2024 եւ 2025 թթ.) չեն հաղթահարել կամավոր ատեստավորումը կամ ՀՀ կառավարության 2022 թ. ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջի համաձայն՝ վերատեստավորման արդյունքում 50-59 տոկոս արդյունք չեն ցուցաբերել կամ նախորդ ատեստավորման ամենաբարձր արդյունքի նկատմամբ 15 տոկոսային կետ աճ չեն ապահովել եւ զրկվում են տվյալ առարկայի դասավանդման իրավունքից, իսկ միայն տվյալ առարկան դասավանդելու դեպքում ենթակա են ազատման: Կամավոր ատեստավորման լրացուցիչ փուլի բողոքարկման արդյունքներն ուսումնասիրելուց եւ վերլուծելուց հետո միայն հնարավոր կլինի տրամադրել ատեստավորման ամփոփված արդյունքների վերաբերյալ վերջնական տեղեկատվություն»:

Ապրիլի 26-ից մինչեւ մայիսի 12-ը 17 օր է, այդքան ժամանակում հնարավոր չէ՞ ամփոփել լրացուցիչ փուլի բողոքարկման արդյունքները: Կարելի էր արդյունքները հայտնել՝ հավելելով, որ այսքան ուսուցիչ բողոքարկել է լրացուցիչ փուլի արդյունքները: Իսկ գուցե իշխանությունը խուսափո՞ւմ է մինչեւ ընտրությունները դուրս մնացող ուսուցիչների ցանկը հրապարակելուց, որ ձայներ չկորցնի:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈ՞Ք ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ՆԱԽԸՆՏՐԵԼ ԵՆ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հունիսի 7-ին Հայաստանում խորհրդարանական ընտրություններ են, եւ, փառք Բարձրյալին, նախորդ՝ 2021-ի, 2018-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների համեմատությամբ այժմ արմատապես տարբեր իրադրություն է: Ներկաներ-նախկիններ, Փաշինյան-Քոչարյան արատավոր փակ շրջանը վերջապես հաղթահարվեց: Այժմ Փաշինյան մերժելն ինքնաբերաբար չի նշանակում Քոչարյան ընտրել, որքան էլ Փաշինյանը եւ ՔՊ-ն դա երազեն եւ իրականությունը խեղաթյուրելով՝ հասարակությանը նման վարկած մատուցեն:

Մինչեւ Սամվել Կարապետյանի՝ անձնապես ասպարեզում երեւալը եւ խոսելը՝ ասուլիսներում եւ կարճ տեսանյութերում, ՔՊ-ի այդ հուսահատ քարոզը կարող էր մտածելու տեղիք տալ: Ամենքս էլ գիտակցում ենք, որ ՔՊ-ի հաղթաթուղթն ընտրություններում ոչ թե սեփական ծառայությունները կամ ձեռքբերումներն են, այլ Քոչարյանի վերադարձը կանխելը: Քիչ է մնացել ՔՊ-ից ասեն՝ չլիներ Քոչարյանի վերադարձի ուրվականը, ՔՊ-ն չէր կառչի իշխանությունից: Քոչարյանն էլ իր հերթին է հավատացնում՝ թե չլիներ Հայաստանը եւ հայությանը Փաշինյանից փրկելու հրամայականը, ինքը վերստին չէր ձգտի իշխանության: Սակայն որքան էլ երկուսն էլ՝ Փաշինյանն էլ, Քոչարյանն էլ, մահու չափ հոգնեցրել են ամենքին եւ գրեթե համատարած մերժվում են (2021-ին Փաշինյանին եւ իր ՔՊ-ին չէր ընտրել Հայաստանում ընտրական իրավունք ունեցողների գրեթե 80 %-ը, Քոչարյանի դաշինքին՝ 90 %-ը), այդ տանդեմը մնում էր ասպարեզում, որովհետեւ մնացյալ ուժերի թվից ֆավորիտ չէր հայտնվում:

Սակայն վերջին մեկ-երկու շաբաթում Սամվել Կարապետյանի՝ անձնապես հասարակությանը ներկայանալուց եւ արտահայտվելուց հետո, թող ներվի ասել՝ միայն մտավոր հետամնացը կհավատա, թե Սամվել Կարապետյանը վարչապետի պաշտոնը ոչ թե անձամբ կստանձնի, այլ կփոխանցի Ռոբերտ Քոչարյանին (դեռ մի կողմ թողած, որ Քոչարյանն իր առաջնորդած դաշինքով դեռ պետք է 8 %-ի շեմ հաղթահարի, ինչն ամենեւին երաշխավորված չէ):

Գալով Փաշինյանի անուժ փաստարկին, թե իբր ՀՀ սահմանադրությամբ վարչապետի թեկնածուից (ինչպես ԱԺ պատգամավորից) պահանջվում են վերջին մի քանի տարվա միայն ՀՀ քաղաքացիություն, մշտական բնակություն Հայաստանում, չգիտես էլ ինչ, Փաշինյանը եթե ողջ կյանքում, տգիտությունից դրդված, միայն հրեաների Tanakh-ից սաղմոսներ կիսատ-պռատ անգիր արած չլիներ, այլ մի երկու անգամ էլ գոնե քրիստոնյաների Սուրբ Գիրքը՝ Նոր Կտակարանը բացած լիներ, կիմանար Հիսուսի բառերը. «Շաբաթը մարդուն համար եղաւ, ո՛չ թե մարդը շաբաթին համար»:

ՀՀ սահմանադրությունը ոչ մի արգելք չի ստեղծում խորհրդարանական քվեարկությամբ վարչապետին ներկայացվող պահանջները փոխելու եւ Սամվել Կարապետյանին ընտրելու: Փաշինյանը մոռացե՞լ է, թե ինչպես էր ժամանակին հայտարարում, թե իբր ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանն անձամբ իրեն ցույց է տվել Մեծ Բրիտանիայի քաղաքացիության չեղարկման գրությունը: Դա՝ այն դեպքում, երբ Փաշինյանը ո՛չ կարող է անգլերեն Declaration of Renunciation բառերը գրել կամ թեկուզ կարդալ, ո՛չ հասկացողություն ունի, թե դա ինչ փաստաթուղթ է, ո՛չ էլ կարող է նման փաստաթղթի վավերականություն կամ բովանդակություն ընկալել: Արմեն Սարգսյանը երբեք բրիտանական քաղաքացիությունից չէր հրաժարվել եւ երկքաղաքացի լինելով, մինչ այդ մի 30 տարի էլ առհասարակ Հայաստանում չապրելով՝ Փաշինյանի գիտությամբ եւ վարչապետության օրոք 4 տարի պաշտոնավարում էր որպես ՀՀ նախագահ:

Չլինի՞, թե Փաշինյանին թվում է, որ իրեն եւ Արմեն Սարգսյանին կարելի է իրականություն կեղծել ու կոծկել, սահմանադրություն շրջանցել ու ոտնահարել, հետո «Գողն ամենաբարձրն է բղավում՝ բռնեցեք գողին» ոգով սահմանադրությունից ու օրինականությունից ճամարտակել: Ընդսմին, Սամվել Կարապետյանը որեւէ փաստ չի էլ խեղաթյուրում կամ թաքցնում: Իրենք փետրվարից ի վեր ասում են, որ ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածն են սահմանադրական օրենքով փոխելու: Այսինքն՝ վարվելու են ճիշտ այնպես, ինչպես Նիկոլ Փաշինյանը եւ ՔՊ-ն՝ 2020-ին, երբ վերջիններս ԱԺ քվեարկությամբ սահմանադրության հոդված փոխեցին՝ ՍԴ անցանկալի անդամներին հեռացնելու եւ իրենց ցանկալի անձանց ՍԴ կազմում ընտրելու համար: Խոտորնակին՝ խոտորնակ: Այդ ո՞ր տրամաբանությամբ Փաշինյանը կարող է սահմանադրության հոդված փոխել, Կարապետյանը չի կարող:

Այնպես որ, իրավական առումով Սամվել Կարապետյանին ոչինչ չի խոչընդոտում՝ ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնելու: Իսկ այդ մարդու խոսքին եւ կերպարին նայելով՝ նա երբեք ոչ մի Քոչարյանի չի զիջի պաշտոն, որտեղ անհամեմատ հաջող եւ խոստումնալից կարող է պաշտոնավարել ինքը:

ԱՐԴՅՈ՞Ք ՎԱՇԻՆԳՏՈՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒՄ Է

Առհասարակ, ոչ միայն Սամվել Կարապետյանն է ակնհայտորեն վստահ իր կառավարելու կարողությանը, այլեւ մնացյալ աշխարհում էլ կարծես հաշվարկում են Փաշինյանի հեռացումը եւ Կարապետյանի՝ իշխանության գալը: Ենթադրում եմ՝ առաջին հերթին Վաշինգտոնում է դա արվում: Ի վերջո, Կարապետյանի ընտանիքի շփումներն ամերիկյան լրագրողների, փաստաբանների եւ այլոց հետ դժվար թե կուլիսներում Թրամփի վարչակազմի հետ կոնտակտներ հաստատելու կողմնակի հաշվարկ եւ նպատակ չեն ունեցել: Ո՞վ կհավատա, թե Հայաստանում այնպիսի արդարադատություն է գործում, որ ընդամենը «մեր ձեւով կպայքարենք» հայտարարության համար կալանավորված մարդուն հանկարծ ընտրություններին ընդառաջ, ինքնաբուխ կալանավայրից ազատում են, տնային կալանք են տալիս, հետո կուսակցության հիմնադրման հետ են ատամները կրճտացնելով համակերպվում, հետո հանրային խոսքի արգելք են հանում: Նման տեղաշարժերը կարող էին կատարվել միայն Փաշինյանին ապտակելու եւ ճնշելու արդյունքում: Իսկ Փաշինյանին ըստ հարկի ապտակել եւ ճնշել կարող են Վաշինգտոնից:

Գաղտնիք չէ, որ եթե մեկը Թրամփին ներկայացներ, որ Սամվել Կարապետյանն 90-ականների ռուսաստանյան ամենաթողության ու հանցագործության միջավայրում վերապրած եւ անշարժ գույքի շուկայում տեսանելի դիրքի հասած անձ է, որը զրոյից նույնպիսի ֆինանսական կարողություն է ստեղծել, ինչ Թրամփը՝ ինքը, այսքան ու այնքան նվիրատվություններ է արել աշխարհում առաջին քրիստոնեական երկրին, Թրամփի համակրանքը Կարապետյանի հանդեպ կերաշխավորվեր: Իսկ քանի՞ հոգի կարող էին այդքանն անել՝ Tucker Carlson-ից մինչեւ Սպիտակ տան պաշտոնյաներ: Եթե հետո էլ շարունակեին, որ Հայաստանում 2018-ից իշխանություն ղեկին գտնվող մի պլեբեյ, որին Դուք տեսել եք, բայց անուն-ազգանունը չեք էլ մտապահում, որը քրիստոնեական երկրի տարածք, մարդկանց ու կրոնական-մշակութային ժառանգություն չի կարողացել պաշտպանել եւ թողել է մի վայրագ մահմեդական զանգվածի, այդ Սամվել Կարապետյանին մի քանի բառի համար ամիսներով կալանավայրում է պահում, ապա ավելի քան հավանական է, որ թեկուզ միայն դասակարգային համերաշխությունից ելնելով (ինչը Թրամփի համակրությունների ու հակակրությունների անկյունաքարն է), ԱՄՆ նախագահը հանձնարարեր խնդիրը լուծել:

Վերջապես, Թրամփը սիրում է շփվել մարդկանց հետ, ում արժեք է վերագրում, եւ առանց սեթեւեթելու գրողի ծոցն է ուղարկում նրանց, ում արհամարհում է էության, ծագման, կենսագրության կամ մի այլ պատճառով: Լոնդոնի քաղաքապետ Սադիկ Խանի հանդեպ վերաբերմունքը (երբ Բուքինգեմյան պալատին հատուկ խնդրել էր, որ պաշտոնական ճաշկերույթին Սադիկ Խանը չհրավիրվի)՝ ասվածի վառ օրինակ: Սամվել Կարապետյան-Նիկոլ Փաշինյան հակադրությունում Կարապետյանն ամեն նախադրյալ ունի Թրամփի համակրանքը շահելու՝ կենսագրությունից մինչեւ պահվածք ու խոսքի լակոնիզմ:

Մինչդեռ Փաշինյանը չունի թեկուզ մի որակ, որը նրան փրկեր Թրամփի արհամարհանքից եւ խորշանքից: Փաշինյանն ամեն ինչով Թրամփի, նրա նախընտրությունների, արժեքային համակարգի անտիպոդն է՝ մինչեւ ուղնուծուծը ընչազուրկ պլեբեյ, գետնախորշի էության կրող ու այդ մակարդակից չբարձրացած, մարդկային վայելուչ պահվածքի եւ շփման անընդունակ, հետն էլ՝ անդաստիարակ, թերուս ու գետնաքարշ մի արարած, որի հետ շփվելը Թրամփը ու ոչ միայն Թրամփը մարդկային արժանապատվությունից ցածր կհամարեն:

Դրա համար էլ Թրամփը գեթ մեկ անգամ Փաշինյանի անունը կամ ազգանունը հիշողությամբ չի արտասանել: Ապրիլի 24-ին էլ իր ուղերձով հրապարակավ ապտակեց: Մինչդեռ այն տեղաշարժերում, որ տեղի են ունենում աշխարհում եւ հատկապես Մերձավոր Արեւելքում, Վաշինգտոնին հարկավոր է Հայաստանում ոչ թե արհամարհանքի, այլ հարգանքի արժանի մեկը, ում հետ կարելի է խոսել, պայմանավորվել, համագործակցել: Այդ անհրաժեշտությունը զգալիորեն բացատրում է, թե ինչու է Սամվել Կարապետյանն այսօր կալանավայրից դուրս, իր տանը, ակտիվ ընտրարշավում՝ հակառակ տան տարածքը չթողնելուն:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱԿՆՀԱՅՏ ԱՐԺԱՆԻՔԸ

Այն, ինչը Սամվել Կարապետյանին կալանավայրից հանեց, դարձրեց կուսակցության հիմնադիր, այժմ՝ խորհրդարանական ընտրարշավի ֆավորիտ ու կենտրոնական ֆիգուր եւ մոտ ապագայում, ամենայն հավանականությամբ՝ ՀՀ վարչապետ, նրա մտածելու կարողությունն է: Ինչը էլ ավելի հազվադեպ երեւույթ է՝ անկաշկանդ մտածելու կարողությունը: Այդ մարդն ինչ հարցի էլ պատասխանի, ինչ էլ ասի՝ զգացվում է, որ բառային կաղապար, մտապատճեն չի թութակում, այլ մտածում է: Եվ անկաշկանդ է մտածում: Ասենք, լրագրողի հարցին, թե իշխանություն ստանձնելու դեպքում ինչ վերաբերմունք կունենաք ԵՄ-ին անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին օրենքի նկատմամբ, Կարապետյանի պատասխանը եղավ, թե օրենքը կմնա ուժի մեջ, կգործի, բայց երգել-պարելուց այն կողմ, իր կարծիքով, օբյեկտիվ անվտանգային խնդիրներ կան, որոնց լուծումը պետք է ունենալ քայլեր անելուց առաջ: Էլի ինչ-որ բան ասաց, բայց ի վերջո ամփոփեց, որ եթե եվրոպական ինտեգրումը մեր երկիրը ներքաշի այնպիսի աղետների մեջ, ինչպիսիք վիճակվեցին Ուկրաինային, Վրաստանին, ինքը ձեռնպահ կմնա եվրահինտեգրման ուղղությամբ քայլերից, եւ, ընդհակառակը՝ եթե երեւա, որ այդ ինտեգրումը Հայաստանին բերելու է բարիքներ, ապա կքայլենք այդ ուղղությամբ, եւ ոչինչ, այդ թվում՝ Ռուսաստանի արձագանքը, մեզ ետ չի կանգնեցնի:

Կարող էր, չէ՞, անիմաստ ֆրազներ շաղ տալ, ստերեոտիպներ թութակել, թե Ռուսաստանի հետ 200-ամյա առնչությունն ի՛նչ նշանակություն ունի 4500-ամյա Հայաստանի ու հայության համար, առանց հյուսիսից ծագող արեւի Հայաստան չի լինի, կամ էլ վերջին հայտնագործություն-կարգախոսը՝ Ռուսաստանը լավ բարեկամ չէ, բայց շատ վատ թշնամի է՝ զգուշացեք: Կամ, ընդհակառակը՝ ինչպես է Ռուսաստանից հեռանալը դարձել ժամանակի հրամայական, որին պետք է հետեւել... Սակայն ոչ՝ անձը լակոնիկ եւ հստակ ասում է այն, ինչը խնդրի էությունն է, ինչպես մտածում է, եւ ինչպես էլ սպասելի է, որ կգործի: Մտածողության, խոսքի ու գործի այդ լակոնիզմն ու անկաշկանդությունն էլ վստահություն են ներշնչում Սամվել Կարապետյանի հանդեպ՝ բերելով աջակիցներ՝ ՀՀ առաջին նախագահից մինչեւ քաղաքացիներ եւ անդին:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ՆՈՒՅՆ ԽՈՍՈՒՅԹՆ Է, ՆՈՒՅՆ ՊԱՀՎԱԾՔԸ, ԻՆՉ ԱՐՑԱԽԻ ԴԵՊՔՈՒՄ ԷՐ, ՀԻՄԱ՝ ԱՐԴԵՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՇՈՒՐՋ

*«Հրապարակի» զրուցակիցն Արցախի ԱԺ պատգամավոր **Մետաքսե Հակոբյանն** է:*

- ԱԺ ընտրությունների պաշտոնական քարոզարշավի մեկնարկին Փաշինյանը կրկին հակաարցախյան պոռթկումներ ունեցավ: Նախ, մետրոյում տեղի ունեցած միջադեպի ժամանակ ասաց, թե «արցախցիները փախել են Արցախից»: Օրերս էլ հայտարարեց՝ «Արցախը երբեք մերը չի եղել, անգամ Հայաստանը մերը չի եղել»: Չմտածված հայտարարություններ են՝ չի՞ վախենում իր թշնամական արտահայտություններով կորցնել առնվազն արցախահայ ընտրազանգվածին:

- Օրվա իշխանության ղեկավարը երբեք պատահական ոչինչ չի անում, եւ ժամանակի ընթացքում բոլոր այն տեխնոլոգիաները, որն օգտագործել է՝ շոշափելով, հասկանալով արցախահայության տրամադրվածությունը, արդյունքում շատ լավ հասկացել է, որ արցախահայության շրջանում ինքը չի կարող ունենալ ընտրազանգված՝ բացառությամբ 1-2 կամ մեկ տասնյակ արցախցիների, որոնց այս ամբողջ 2,5 տարիների ընթացքում ինքը լավագույնս օգտագործեց: Համենայնդեպս, Հայաստանի մեր հայրենակիցներին ցույց տալու համար, որ արցախցիներն իբր հաշտ են ստեղծված իրավիճակի հետ եւ կիսում են իր բոլոր քաղաքական գործընթացները: Իրականում, ինքն էլ լավ գիտի, որ այդպես չէ, եւ որ արցախցիները որեւէ կերպ չեն հրաժարվում իրենց նպատակներից, ու նրանք հաշտ չեն այս իրականության հետ: Հակառակը՝ արցախցիներն ընկալում են, որ հայրենիքի այս հատվածում՝ մայր Հայաստանում ապրելը ժամանակավոր է, մինչ իրենց բնօրրանը վերադառնալը: Քարոզարշավի ժամանակ այս պահվածքով, անընդհատ շոշափելով Արցախի ու արցախցիների հարցը՝ Փաշինյանը 2 խնդիր է լուծում: Նախ, ցույց է տալիս Ադրբեջանին, որ, իբրեւ թե, Հայաստանում այլեւս չկա նման խնդիր, իսկ ներքին լսարանի համար փորձում է ցույց տալ, որ արցախցիները եւս հաշտ են այս իրողության հետ, Արցախի հարցն էլ փակ է: Իսկ Արցախի հարցն իրականում փակ չէ՝ ո՛չ Հայաստանի մեր հայրենակիցների, արցախցիների եւ, ընդհանուր առմամբ, հայի համար, այդ թվում՝ սփյուռքում, եւ Նիկոլը, շատ լավ գիտակցելով դա, փորձում է այս փուլում այդ ցուցադրությունն անել, որովհետեւ իր համար կենաց-մահու հարց է առաջիկա ընտրություններում վերարտադրվելը: Այն պահանջները, որոնք ամիսներ շարունակ հնչում են Բաքվից, զուտ դրա մասին են: Նաեւ Ադրբեջանի պաշտոնյաների շուրթերից այս ամիսների ընթացքում հնչող արտահայտությունները եւս դրա մասին են: Ընդհանուր առմամբ, թե՛ Ադրբեջանը եւ թե՛ Թուրքիան չեն թաքցնում, որ իրենց նպատակների համար պետք է այս իշխանությունների վերարտադրումը՝ գոնե մեկ տարի ժամանակահատվածով:

- Եվ դա ասում է մեկը, որը ժամանակին Ստեփանակերտի հրապարակում հանրահավաքի ժամանակ խրոխտ հայտարարում էր՝ Արցախը Հայաստանն է, եւ վերջ: Մարդ, որն այցելում էր Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոց, Արցախի նախկին երեք նախագահների ուղեկցությամբ, նրանց, որոնք այժմ պատանդառված են Բաքվի բանտերում:

- Մեր հասարակությունը շատ լավ պատկերացնում է, որ մինչեւ պատերազմը եւ պատերազմից հետո իրենց նախընտրական քարոզարշավի շրջանակներում՝ 2021 թվականին, այս անձը՝ ՀՀ ղեկավարն ու նրա շրջապատն անդադար խոսում էին Արցախի մասին, լուսանկարվում էին Արցախում, Ակնան կոչում էին իրենց հայրենիք, 2021 թ. քարոզարշավի նախընտրական ծրագրում ունեին նաեւ դրույթներ, թե ինչպես պիտի հանձնված տարածքների դեօկուպացիա ապահովեն եւ այլն, հիմա գոնե հասկանալի է, որ այդ ամենն արվում էր, որպեսզի ժողովրդի ինքնապաշտպանական զգացմունքները թուլացնեին եւ կարողանային անել այն ամենը, ինչն արեցին, այն ամբողջ ծրագիրը, որն ունեին Ադրբեջանն ու Թուրքիան այն ժամանակ, մասնավորապես՝ Արցախի, մասամբ՝ Հայաստանի մասով: Հիմա նույն խոսույթն է, նույն պահվածքն արդեն Սյունիքի շուրջ, քարոզարշավի ժամանակ անդադար հայտարարություններ են անում Սյունիքի մասին՝ ասելով, որ ինքնիշխան Հայաստանի անբաժանելի տարածքն է: Զուգահեռաբար լսում ենք Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից հնչող հայտարարությունները, մասնավորապես՝ Սյունիքի մասով, իսկ ավելի հստակ՝ իրենց հռչակած «Արեւմտյան Ադրբեջան» կազմակերպության ղեկավարը հայտարարում է, որ այդ ամենը տեղի է ունենալու իրենց հայտարարած խաղաղության օրակարգի շրջանակներում, երբ իրենք խաղաղության հաստատման ժամանակ, ինչպես ասել է Ալիեւը, «գալու են իրենց բնօրրան»: Մենք լավ գիտենք, որ «Արեւմտյան Ադրբեջան» ասելիս, նկատի ունեն Սյունիքն ու հարակից տարածքները եւ պատրաստվում են 300 հազար ադրբեջանցիներով, ավտոերթով գալ եւ բնակվել: Այս խոսույթը պետք է այնքանով անհանգստացնի, որ խոսքը ՀՀ սուվերեն տարածքներին է վերաբերում:

- 44-օրյայի օրերին էլ Փաշինյանը BBC-ին տված հարցազրույցում պնդում էր՝ Արցախը, այո, Հայաստան է, հայերի երկիրն է, որովհետեւ միշտ այնտեղ բնակչության 80 եւ ավելի տոկոսը եղել են հայեր: Իսկ Ադրբեջանն ուզում է, որ այնտեղ չապրեն հայերը: Հիմա արցախցիների վերադարձը վտանգավոր համարելով՝ փաստորեն, ինքը եւս չի ուզում, որ այնտեղ հայեր ապրեն:

- Հիմա ավելի ակնհայտ է, որ այս տարիների ընթացքում Արցախի մասին խոսելիս՝ որպես հայերի երկրի, ինչու չէ՝ նաեւ Հայաստանի հատվածի, Փաշինյանը կատարել է իր եւ Ադրբեջանի անձնական պայմանավորվածությունները, որի արդյունքում կկարողանար շարունակել իշխանավարել, որպեսզի կարողանար կատարել այն բոլոր պահանջները, որոնք իր առջեւ դրել էին Ադրբեջանն ու Թուրքիան: Բնականաբար, 2023 թ. Ալիեւի եւ Փաշինյանի համատեղ կազմակերպած Արցախի հայաթափումից հետո իրենք ջանք ու եռանդ չխնայեցին (այդ առումով ավելի շատ աշխատանք տարավ Նիկոլ Փաշինյանը), որպեսզի Արցախի հարցը փակեն: Փաշինյանը վերջին շրջանում, առանց թաքցնելու իր հեռահար նպատակները, խեղաթյուրում է այնպես, ինչպես երբեւէ խեղաթյուրել է պատմությունն Ադրբեջանը, կամ ներկայացնում է, թե Արցախն իբր հայկական չի եղել, երբեւէ մերը չի եղել: Սրանից ավելի ապացույցի կարիք չկա մեզ՝ հասկանալու, որ Փաշինյանն ուղիղ կատարում է Ադրբեջանի ծրագիրը, հրահանգները, որոնք այս փուլում ուղիղ վերաբերում են Հայաստանի Հանրապետությանը:

- Արցախը հանձնած, Արցախի հարցը փակված համարող, մայր բնօրրան արցախցիների վերադարձը վտանգավոր համարող այս մարդու համար ի՞նչ քաղաքական «դատավճիռ» չեն նախատեսել մեր արցախցի եղբայրներն ու քույրերը. հունիսի 7-ին միասնական դիրքորոշում ու գնահատական ունե՞ք՝ Փաշինյանի ռեժիմը հեռացնելու առումով:

- Արցախցիների միասնական որոշումն աներկբա է՝ կապված գալիք ընտրությունների հետ. արցախցիները միաբերան խոսում են, չեն թաքցնում, որ մեջքով շրջված են այս իշխանություններին եւ միանշանակ սատարելու են ազգային ուժերին: Այս փուլում շատ կարեւոր է արցախցիների չպառակտվելը նաեւ ընդդիմադիր դաշտում, եւ այդ առումով մենք փորձում ենք որեւէ աշխատանք այդ ուղղությամբ չանել՝ շատ լավ իմանալով արցախցիների դիրքորոշումը: Մենք խնդրում ենք նաեւ մեր ընդդիմադիր ազգային ուժերի ներկայացուցիչներին, մեր գործընկերներին՝ զգույշ վերաբերվել արցախցիների հետ այս փուլում, չփորձել պառակտել, որովհետեւ բոլորը պետք է միանշանակ համոզված լինեն, որ արցախցին իր ձայնը տալու է միմիայն ազգային ուժերին: Եվ ես խնդրում եմ 1, 2, 3 տասնյակ արցախցիներին, որոնք, ցավոք սրտի, նյութականը վեր են դասել հայրենիքից եւ այն պատգամից, որ մեզ թողել են նահատակված քաջորդիները, այդ գործոնը հիմք չընդունեն, չմտածեն, որ արցախցիները կարող են երբեւէ սատարել այս իշխանություններին:

Արա ԱԼՈՅԱՆ

ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԵՑԱՎ ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐՔ



Նախօրեին Վրաստանում՝ Մցխեթի հնամենի Սվետիցխովելի տաճարում տեղի ունեցավ Վրաց ուղղափառ եկեղեցու նորընտիր կաթողիկոս-պատրիարք Շիո 3-րդի գահակալության արարողությունը: Նա Վրաց եկեղեցու 142-րդ գահակալ է ընտրվել մայիսի 11-ին տեղի ունեցած Սրբազան Սինոդի ընդլայնված ժողովի ժամանակ: Գահակալության արարողությունը տեղի ունեցավ խորհրդանշական օր՝ Սբ Անդրեաս Նախակոչ առաքյալի տոնի օրը: Եկեղեցական այդ տոնը Վրաստանում պետական տոն է՝ ոչ աշխատանքային օր: Սիմվոլիկ է նաեւ այն, որ գահակալությունը տեղի ունեցավ Սվետիցխովելիում՝ վրացական պետության հին մայրաքաղաքի Հայրապետական մայր տաճարում: Բավականին ժամանակ նա արդեն ծերունազարդ Իլյա 2-րդի ժամանակ վարել է տեղապահի պաշտոն եւ վրացական կրոնական-եկեղեցական ու հասարակական շրջանակներին քաջածանոթ է: Ու հիմա կարեւոր է, թե հայրապետական գահ բարձրացած Շիո 3-րդի օրոք ինչ կփոխվի Վրաց ուղղափառ եկեղեցում:

Վրացի քաղաքագետ Արչիլ Սիխարուլիձեն կարծում է, որ վրացական իշխող քաղաքական մեծամասնությունը՝ «Վրացական երազանքը», եւ պահպանողական մյուս ուժերը շատ ուրախ են, որ Շիո պատրիարքն է գահ բարձրացել, եւ նա է ղեկավարելու Վրաց եկեղեցին: Արեւմտամետները դժգոհ էին, որովհետեւ Շիո պատրիարքը պահպանողական եկեղեցականի համբավ ունի: Շիո 3-րդը կողմնակից է ընտանիքի ավանդական արժեքներին, վրացական ինքնության եւ դարավոր ավանդույթների պահպանմանը: Փորձագետը կարծում է, որ 90 տոկոսով նա շարունակելու է այն գիծը, որը որդեգրել էր Վրաց ուղղափառ եկեղեցին՝ Իլյա 2-րդի ժամանակ: Ու դա շատ կարեւոր է թե՛ վրացական եկեղեցու, թե՛ պետության եւ վրաց ժողովրդի ճնշող մեծամասնության համար: Մյուս կողմից էլ, 57 տարեկան նոր պատրիարքն ավելի ակտիվ ու գործունյա կլինի, հետեւաբար՝ նաեւ վրացական եկեղեցու մասնակցությունը երկրի կյանքին կակտիվանա: Իլյա 2-րդն էլ, երբ երիտասարդ էր, շատ ակտիվ ու գործունյա հովվապետ էր: Նույն սպասելիքները կան հիմա Շիո պատրիարքից: Արդեն հնչել են կարծիքներ, որ հնարավոր է նորընտիր պատրիարքը խնդրի, որ ազատ արձակեն այն բոլոր երիտասարդներին, ովքեր, մասնակցելով բողոքի գործողությունների, հայտնվել են բանտերում տարբեր մեղադրանքներով: Ռուսական գիծը եւս աչքաթող չի արվի: Շիո 3-րդը Ռուս ուղղափառ եկեղեցու հետ ունի խոր հոգեւոր եւ մարդկային կապեր, ուսանել է ժամանակին Մոսկվայի հոգեւոր ճեմարանում: Մոսկվայի պատրիարքարանը շնորհավորել է Շիո 3-րդին: Հնարավոր է, որ այս առիթն օգտագործվի, որպեսզի կարգավորվեն Աբխազիայում եւ Հարավային Օսիայում Վրաց եկեղեցու կարգավիճակն ու դերակատարումը: Ի դեպ, վրաց պատրիարքը, ըստ տիտղոսի, նաեւ Աբխազիայի միտրոպոլիտն է: Անելիքներ շատ կան, սպասելիքներ՝ եւս: Ամեն դեպքում, նոր պատրիարքը նոր հույսեր ու նոր հնարավորություններ է նշանակում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԻԱՅՆ ԱՅԴ ՓԱՍՏԸ ԲԱՎԱԿԱՆ Է, ՈՐ ՆԱ ՀԱՄԱՐՎԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ 5000-ԱՄՅԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԴԱՎԱՃԱՆԸ

ԿՐԾՈՒՄ

Իմ զրուցակիցն է արդարադատության գեներալ, ՀՀ դատախազությունում 20 տարի հատկապես կարեւոր գործերով քննիչ աշխատած, «Իրավական աշխարհ» փաստագրական հուշապատում-վեպի հեղինակ **Ալբերտ Մարգարյանը**: Նա իր գրքում գրել է. «Նիկոլն ո՞վ էր կամ ի՞նչ էր իրենից ներկայացնում՝ մի շատ սովորական սադրիչ, շառլատան, ստախոս ու հրահրող, ոչ ավելին»: «Նիկոլի՝ իշխանության գալու հարցում դերակատարում է ունեցել նաեւ թուրք-ադրբեջանական տանդեմը՝ Անգլիայի գլխավորությամբ: Շատերն են եկել այն հետեւության, որ Նիկոլը խոստացել է հօգուտ Ադրբեջանի լուծել Ղարաբաղի հարցը, պարզապես քարուքանդ անել Հայաստանը, քանդել ու թուլացնել հայոց բանակը, արժեզրկել Եկեղեցու դերը եւ վարկաբեկել, քանդել կրթական համակարգը»:

- Այսօր ինչպե՞ս եք գնահատում ներհայաստանյան իրավիճակը: Գո՞հ եք ներկայիս կառավարության գործունեությունից:

- Նորմալ, բանական մարդը, եթե խելքը չի թռցրել կամ էլ անուղղելի նիկոլապաշտ չէ, ինչպե՞ս կարող է գոհ լինել ներկայիս կառավարության եւ նրա գլուխ կանգնած վարչապետի գործունեությունից: Լրացավ 8 տարին, եթե ասեմ՝ այս կառավարության եւ նրա ղեկավար Փաշինյանի անփառունակ ու խայտառակ գործունեության 8 տարին, կնշանակի ոչինչ չասել: Կառավարություն ասելով նկատի ունեմ բացառապես մեկ անձի՝ Նիկոլին, մյուս անդամներն ուղղակի տիկնիկներ են, որոնց կառավարման թե՛ տեսանելի, թե՛ անտեսանելի թելերը գտնվում են տիկնիկավար Նիկոլի ձեռքում, եւ պիտի ասել, որ նա էլ հմուտ տիկնիկավարություն է անում: Զավեշտն այն է, որ ինքը տիկնիկ է հավաքական Արեւմուտքի, ինչպես նաեւ՝ Էրդողանի ու Ալիեւի ձեռքում՝ իրեն կառավարելու բոլոր թելերը գտնվում են նրանց ձեռքերում: Մեկնարկել է խորհրդարանական ընտրությունների պաշտոնական քարոզարշավը, շատ քիչ ժամանակ է մնացել այս իշխանություններից ազատվելու վերջին փորձը կատարելու համար, ուստի պետք է բացառապես խոսել այն մասին, թե ինչ է անհրաժեշտ անել այս չարագործ, դավաճան ու ազգակործան իշխանությունից եւ նրա ղեկավարից ազատվելու համար: Ես իմ կյանքի երկարուձիգ տարիների ընթացքում աշխատանքի բերումով շա՛տ-շատ բաներ եմ տեսել եւ շատ քիչ դեպքերում եմ առիթ ունենում զարմանալու, բայց ներկայում հայ իրականության եւ ներհայաստանյան քաղաքական կյանքում առկա փաստերի վրա խորհելով՝ ոչ մի կերպ գլուխ չեմ հանում, թե ինչու է այսպես եւ ինչու պիտի այսպես լինի:

Փաստ 1. Պառակտված ընդդիմությունը չկարողացավ միավորվել եւ միասնական ճակատով հանդես գալ: Խոսքը, իհարկե, իրական ընդդիմության մասին է եւ ոչ թե Նիկոլի վճարովի ընդդիմության, որոնց վերաբերյալ չարժե ծավալվել: Իրական ընդդիմադիր ուժերի չմիավորվելու հիմնական պատճառն իբր՝ կան գաղափարական սուր հակասություններ, որոնք արգելք են միավորվելու եւ միասնական ճակատով հանդես գալու համար: Բայց եթե իրական ընդդիմության՝ Սամվել Կարապետյանի, Ռոբերտ Քոչարյանի, Գագիկ Ծառուկյանի, Արման Թաթոյանի միակ նպատակը գործող իշխանությանն իշխանազրկելն է, ապա գաղափարական ամենախորագույն հակասությունը, անհաղթահարելի ամբիցիան պետք է ստորադասվի ազգափրկիչ նպատակին՝ Նիկոլի ու նրա չարախմբի իշխանազրկմանը: Դրանով մեր ժողովրդին ու պետությանը կփրկեն վերահաս կործանումից: «Ցարին տապալելու համար անգամ սատանայի հետ պետք է համագործակցել». միտքը Լենինինն է: Նիկոլին ու նրա վարչախմբին տապալելու համար անգամ կարելի է ու պետք է համագործակցել «սատանայի հետ»: Հարգարժան ընդդիմադիրներ, այդ ի՞նչ գաղափարական տարաձայնություններ կան ձեր ծրագրերում, ավելի ճիշտ կլինի ասել՝ այդ ի՞նչ ամբիցիաներ ունեք, որոնք չեք կարողանում հաղթահարել: Նկատենք՝ Նիկոլն իր վարչախմբի հետ իր դիվային նպատակներն իրագործելու, երկիրն ու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կործանելու, ցեղասպանությունն ու Արարատ սուրբ լեռան մասին հիշողությունն ու պաշտամունքը հայ ժողովրդի գիտակցությունից ու մտածողությունից արմատախիլ անելու համար լավ էլ համագործակցում է սատանայի հետ:

Փաստ 2. Տեսել ենք, որ ՀՀ բնակչության շուրջ 50%-ը չի մասնակցում ընտրություններին: Ասել է թե՝ ավելի քան մեկ միլիոն մարդ անտարբեր է ոչ միայն հայոց պետականության ու հայ ժողովրդի ճակատագրի, այլեւ հենց իր ու իր ընտանիքի ճակատագրի հանդեպ: Ուզում եմ, որ նրանք կարդան այս թեւավոր միտքը. «Բարեկամներից մի վախեցեք, նրանք վատագույն դեպքում դավաճանում են, թշնամիներից մի վախեցեք, նրանք վատագույն դեպքում սպանում են, վախեցեք անտարբեր մարդկանցից, ովքեր ո՛չ դավաճանում են, ո՛չ սպանում, բայց նրանց անտարբերության պատճառով դավաճանություններ ու սպանություններ են տեղի ունենում ամեն օր»: Անտարբեր քաղաքացիներ, կոչ եմ անում, խնդրում, աղաչում, պաղատում եմ (էլ ինչպե՞ս ասեմ)՝ այս մեկ-միակ անգամը ձեր «թանկ» ժամանակից 20-30 րոպե տրամադրեք եւ մասնակցեք ընտրություններին, քվեարկեք ձեր խղճի մտոք, դրանով փրկած կլինեք եւ հայ ժողովրդին, եւ ձեզ, եւ հայոց պետականությունը:

Փաստ 3. Հարցը վերաբերում է ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած այն քաղաքական ուժերին, որոնք իրենք էլ գիտեն, որ ոչ միայն խորհրդարան մտնելու 4%-անոց շեմը հաղթահարելու հնարավորություն չունեն (ինչպես ես, որ 300 կգ ծանրաձող բարձրացնել չեմ կարող), այլեւ՝ նույնիսկ 1, իսկ առանձին ուժեր անգամ կես տոկոս հավաքելու հնարավորություն չունեն: Խոսքս չի վերաբերում «Նիկոլի մոտ» վարձու ընդդիմություն աշխատող եւ ընդդիմության իմիտացիա անող խմբակներին՝ Արամ Սարգսյանի, Արման Բաբաջանյանի, Լեւոն Շիրինյանի, Հովսեփ Խուրշուդյանի, Գուրգեն Սիմոնյանի, Էդվարդ Անտինյանի: Ենթադրվում է, որ նրանք «կխլեն» ձայների 10%-ից ավելին: Իսկ այդքան ձայների փոշիացումը մեծ ու աններելի շքեղություն է թե՛ ողջ հայ ժողովրդի գիտակից մասի եւ թե՛ իրական ընդդիմադիր ուժերի համար:

Հայտ ներկայացրած մյուս բոլոր ուժերը պետք է ընդամենը մի հարցի պատասխանեն՝ «իրո՞ք իրենց իրական նպատակը Նիկոլին ու նրա վարչախմբին գահընկեց անելն է»: Իհարկե, խոսքը չի վերաբերում այն 4 ուժերին, որոնց հետ հայ ժողովուրդը մեծ հույսեր է կապում՝ «Ուժեղ Հայաստան», «Հայաստան», «Բարգավաճ Հայաստան» եւ վերապահումով՝ «Միասնության թեւեր», որոնք 60-70 % ընտրազանգվածի մասնակցության դեպքում խորհրդարանում միավորվելու եւ գործող վարչախմբին քաղաքական լուսանցք մղելու ռեալ հնարավորությունն ունեն:

Ես ոչ միայն գոհ չեմ Նիկոլից ու նրա վարչախմբից, այլեւ նողկանք եմ ապրում նրա գործունեությունից: Չեմ մոռանա՝ 2019 թ. օգոստոսին, Արցախում հանրահավաքի ժամանակ (միանգամայն գիտակցաբար եւ սառը հաշվարկով) նա հայտարարեց. «Արցախը Հայաստան է, եւ վերջ»: Դրանով գիտակցաբար Ալիեւի ձեռքերն ազատեց եւ պատերազմ հրահրեց, 44-օրյա պատերազմում զոհաբերեց 18-20 տարեկան մի ամբողջ սերունդ, դեռ մինչեւ Շուշիի կորուստը հրաժարվեց կատարել Պուտինի առաջարկը՝ զինադադար հաստատելու մասին, իսկ 2022 թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում Շառլ Միշելի ու Էմանուել Մակրոնի հորդորով հայտարարեց՝ Լեռնային Ղարաբաղը եղել եւ մնում է Ադրբեջանի տարածք: Դա վերջակետն էր: Հետո՝ 120 հազար արցախցիների տեղահանություն, ռազմաքաղաքական ղեկավարների գերեվարում: Իմ համոզմամբ՝ Ալիեւի հետ փոխադարձ համաձայնությամբ նրանց տեղափոխեցին Բաքու: Եթե Փաշինյան Նիկոլն ուրիշ ոչինչ արած չլիներ, միայն այդքանը բավական է, որ նա համարվի հայ ժողովրդի 5000-ամյա պատմության ընթացքում ամենամեծ դավաճանը, ստախոսը, երեսպաշտը, մանիպուլյատորը, եւ նրա մահից հետո էլ դավաճանի խարանը դաջված մնա նրա անվան վրա այնքան ժամանակ, ինչքան գոյատեւելու է հայ ժողովուրդը: Նրա արածներն այդքանով չեն սահմանափակվում, կարելի է հատորներ գրել ու դարձյալ չավարտել: Նա՝ ինքն է մի քանի անգամ բարձրաձայնել, որ միջպետական հարաբերություններում, այլ պետությունների ղեկավարների հետ շփումների ժամանակ, եթե հարկ է լինում, իրեն գժի տեղ է դնում: Հիմա շատերն են համոզված, որ դա «խաբկանք» չէր:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՐԱՍԻ ԲԱԼԱԲԱՆՅԱՆ. ՀԱՅԱԶԳԻ ԲՐԱԶԻԼԱՑԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

Բրազիլական հեռուստատեսության պատմության մեջ յուրահատուկ տեղ ունի հայազգի դերասանուհի Արասի Բալաբանյանը: Տասնամյակներ շարունակ նա եղել է Բրազիլիայի ամենասիրված դերասանուհիներից մեկը՝ ազգային հեռուստատեսության սիմվոլներից: Նա յուրահատուկ կերպար էր ոչ միայն բրազիլական կամ լատինամերիկյան իրականության մեջ, այլ նաեւ՝ հայկական սփյուռքում: Հայկականությունը նրա վրա մեծ ազդեցություն է ունեցել՝ սկսած ինքնության եւ աշխարհայացքային հարցերից մինչեւ կերպար ու գործունեության նրբերանգներ: Ծնվել է 1940 թվականին, Կամպու-Գրանդի քաղաքում՝ Հայոց ցեղասպանությունը վերապրած հայ գաղթականի ընտանիքում: Ընտանիքը թեեւ ինտեգրված էր բրազիլական իրականությանը, սակայն պահպանում էր հայոց լեզուն, հայկական ավանդույթները: Երիտասարդ տարիքում Արասին տեղափոխվել է Սան-Պաուլո: Այնտեղ ծանոթացել տեղի թատրոնին եւ հեռուստատեսությանը: Ուսանել է սոցիալական գիտություններ, հետո որոշել է նվիրվել դերասանական արվեստին:

Կարիերան սկսել է թատրոնից: 60-ականներին գրավել է քննադատների ուշադրությունը երգիծական դերերով, նաեւ էմոցիոնալ խոր կերպարներ է ստեղծել: Այն ժամանակ բրազիլական թատրոնը վերելք էր ապրում՝ տեղի մշակութային առանձնահատկությունները համադրելով եվրոպական ավանդույթների հետ: Բալաբանյանը կարողանում է դառնալ դրա մասնիկը: Սակայն իրական փառքի հասնում է հեռուստատեսությունում՝ դառնալով բրազիլական սերիալների առանցքային դեմքերից մեկը: Համագործակցում է բրազիլական խոշորագույն հեռուստաընկերությունների հետ, այդ թվում՝ նաեւ TV Globo-ի, եւ դառնում է լեգենդ բրազիլական մշակույթում: Նա համադրում էր հումորն ու դրամատիկ խաղը, արտահայտիչ դիմախաղն ու ձայնի ելեւէջները եւ հիշվող կերպարներ էր ձեւավորում: Այս ամենով հանդերձ՝ նա չէր մոռանում իր հայ լինելու մասին, որքան էլ որ ինտեգրված էր բրազիլական իրականությանը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐՕՐՅԱ ԱՆՏԻԳՈՆԵ. ՍՊԱՐԱՊԵՏԻ ՎԵՐՋԻՆ ՄԱՐԸ

Ես հավատում եմ անդրշիրիմյան կյանքին, հավատում եմ, որ մարդիկ վերեւից ամեն ինչ տեսնում են, ու հավատում եմ, որ վերջում մարդիկ անպայման հանդիպում են երկնքում: Ու սա կրոնական կամ սնոտիապաշտական կամ որեւէ այլ ոչ աշխարհիկ հավատ չէ: Սա քաղաքական հավատամք է այս պահին. այսօր զուտ քաղաքական դրդապատճառներով ես ջերմեռանդ հավատում եմ, որ հանդիպելու են ամպերի մեջ Սարգսյան եղբայրները: Մինչեւ հիմա դրա մասին չէի մտածել, ինձ թվում էր՝ դե, կարելի է ընդունել մարդկային թուլությունները: Բոլորը հերոս չեն, կարող է մեկ ընտանիքում մի եղբայրը հերոս լինել, մեկը՝ թուլամորթ, անգամ՝ դավաճան: Ամեն ինչ էլ կարող է պատահել: Սոֆոկլեսի «Անտիգոնեն» հիշենք. եղբայրներից մեկը՝ դավաճան, մյուսը՝ հայրենասեր, հանուն հայրենիքի մենամարտում են ու սպանում իրար, բայց կար Անտիգոնեն, որ դավաճանին էլ ուզեց անթաղ չթողնել, այլ նրա հերոս եղբոր պատիվներին արժանի հանձնել հողին: Ուրեմն աշխարհի չափ հին են եւ հերոսությունը, եւ դավաճանությունը, եւ ներողամտությունն ու ներումը:

Բայց, միեւնույն է, միամիտ զարմանք է մեզ պատում, երբ սպարապետի եղբայրը հանգիստ լսում, ընկալում եւ մարսում է՝ «Արցախյան շարժումը մեր ճակատագրական սխալն էր», «Արցախը երբեք չի եղել մերը» եւ նմանատիպ մյուս զառանցանքները: Դեռ 18-ին զարմանալի թվաց, երբ մի նորահայտ կեղծ «երկրապահ» «պոռաց», թե այս հեղափոխությունը մեր ժողովրդի համար ավելի կարեւոր էր, քան արցախյան հերոսամարտը: Հենց այդպես ասաց այդ հակահերոսը մեր հերոսամարտի մասին: Ու հարց ծագեց՝ ինչպե՞ս է սա հնչել սպարապետի եղբայրների ականջին, սա դուրեկա՞ն է արդյոք հնչել: Սպարապետի վարչապետ եղած եղբայրը լսում ու մարսում է, ասում է՝ սատարելու ենք այդ բառերի հեղինակին ու այդ մտքերով «առաջ» «պոռացող» քաղաքական խառնամբոխին:

Այսօր, ուրեմն, սպանվում է սպարապետը: Նա սպանվել է շատ անգամ, քանի որ մահապարտ էր, տարել էր տղաներին մարտի դաշտ՝ որպես մահապարտ, ու ամեն մեկի հետ հերթական անգամ սպանվել էր այնտեղ՝ «ուրիշի» հողում: Երբ սպանվեց ֆիզիկապես Ազգային ժողովի դահլիճում, թվաց, թե դա վերջին դավադրական մարտն էր. գնաց, հերոսացավ, ու ավարտվեց կյանքի-մահու նրա պայքարը: Բայց վերջինը: Ո՛չ, դա չէր: Վերջին անգամ նրան սպանում են ու թաղում մոռացումի անպատիվ հողի մեջ՝ այսօր: Այսօր ասում են, որ նա սպարապետ չէր, նա սխալմամբ մեզ մահվան ու տասնամյակներով պատերազմի մեջ թաղած մարդ էր, այնքան մահերի համար մեղավոր, որ գրեթե հասկանալի է դարձնում իր վերջին մարտի տրամաբանությունը: Իրենց մեղքը ճարպկորեն տեղափոխում են հերոս սպարապետի վրա, իրենց պատճառով զոհվածների ծանր բեռը գցում նրա ուսերին: Ու անհնար թվացող այդ արկածում նրանց օգնում է սպարապետի ընտանիքը:

Հասկացեք՝ նա կամ հերոս է, որ ազատագրել է մեր հողը թշնամուց ու դրել մի ծաղկուն երկրի հիմքերը, կամ մարդկանց մահվան առաջնորդած մոլորյալ, որ մեղավոր է այսքան մահվան ու արյան համար: Նա կամ սպարապետ է, որ զենքը ձեռքին առաջնորդել է մահապարտներին դեպի բարձունք, կամ սերունդներին մահվան տարած մոլագար: Այն ժամանակ, երբ բարձունքը մերն էր, բայց տղերքը չկային... տղերքը հերոս էին՝ ոչ թե սխալված, համառ ահաբեկիչներ, ուրիշի հողը գրաված ագրեսորներ, իսկ հիմա այդպես չէ: Երկուսը միաժամանակ լինել չի կարող: Այս հիշխանություններն իրենց սխալը ճիշտ դարձնելու, իրենց կաշին փրկելու համար սպանում, ոչնչացնում, պատվազրկում են այն տղերքին, որոնք հանուն բարձունքի տվեցին իրենց կյանքը ու հատկապես՝ հենց այդ սպարապետի առաջնորդությամբ:

Թեկուզ աշխարհը կանգնի, ասի, թե նրանք թույլ են տվել ճակատագրական սխալ եւ խորթ ու համառ, բայց ահավոր սխալ մեզ առաջնորդել են դեպի մարտադաշտ, մեզ տարել են իմացյալ մահվան, երբ իրենց համար անգամ չիմացյալ էր, թե ինչպիսի ճակատագրական սխալ են անում, միեւնույն է, այդ՝ իրեն ընդդեմ աշխարհում անգամ սպարապետը պետք է ունենար մի փաստաբան, մի պաշտպան, ու դա պետք է լիներ առնվազն իր եղբայրը:

Այսօր Արամ Սարգսյանը, մի կես տոկոս ձայն ունենալով, մասնակցում է ընտրություններին՝ այդ կես տոկոսի չնչին օգուտը գոնե տալու նրան, ով որոշել է այսպես վերացնել սպարապետին, ընդ որում՝ ոչ միայն նրա գործը հարամել, այլ նաեւ՝ անունը, հիշատակը ցեխի հետ շաղախել, վարվել թուրքի պես, հրճվանք պատճառել թշնամուն, ասել, որ մեր հերոսը, մեր սպարապետը սխալ էր՝ երիցս, անուղղելի եւ ճակատագրական սխալ:

Հիմա ո՞վ է սխալ, ո՞վ է բնության սխալը, ո՞վ է սխալ ծնվել այս ընտանիքում. ամեն ինչի խառնաշփոթ այս աշխարհում մենք չենք հասկանա մինչեւ հունիսի 7-ը: Հունիսի 7-ին Արամ Սարգսյանը եւ անսկզբունք ագրեսիվների իր փոքրիկ կեստոկոսանոց թիմը կգնան ընտրատեղամաս ու այնտեղ կքվեարկեն: Կամ կորոշեն, որ սպարապետը ճիշտ էր, շարժումը ճիշտ էր, Արցախը, թեկուզ արդեն կործանված, բայց մերն էր, կամ կորոշեն, որ իրենք են ճիշտ ու, այդպիսով՝ իրենք են բնության սխալմունքը: Կասկածից վեր է, որ կլինի երկրորդ տարբերակը: Այդ պատճառով ես ջերմեռանդորեն հավատում եմ, որ եղբայրները հանդիպելու են վերջում, ու եթե սպարապետը ներելու է եղբորը, ուրեմն մենք ո՞վ ենք, որ չներենք: Ու որքան էլ այս ամենը զզվելի է, ես կլինեմ նորօրյա Անտիգոնեն, որովհետեւ այս ամենը իսկական ողբերգություն է:

Շաբե ԱՎՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 14.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

2002-ԻՑ ՀԵՏՈ ՍԱ ԱՌԱՋԻՆ ԱՅՑՆ ԷՐ

Մեր զրուցակիցն Ուկրաինայի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ՌՀԱԻ) փոխտնօրեն, արտաքին հետազոտությունների կենտրոնի ղեկավար **Մաքսիմ Պալամարչուկն** է:

- Զելենսկու՝ Երեւանում մայիսի 4-ին կայացած ԵՔՀ գագաթնաժողովին արած հեգնական արտահայտությունը, թե Մոսկվայում հաղթանակի շքերթին կարող են «մասնակցել» ուկրաինական ԱԹՍ-ները, անարգանք չէ՞ր մեր ընդհանուր անցյալի, հաղթանակի ու այն կերտած մարդկանց՝ վետերանների, այդ թվում՝ ուկրաինացիների հանդեպ:

- Նացիզմի դեմ տարած հաղթանակի շահագործումը Ռուսաստանի կողմից՝ իր ներկայիս ագրեսիան օրինականացնելու համար, ընդհանուր հիշողության նկատմամբ ամենամեծ անհարգալից վերաբերմունքն է: Դրա զոհերի թվում, ցավոք, կան այդ պատերազմը վերապրած ուկրաինացի վետերաններ:

- Մոսկվայի արձագանքը սպասելի էր Ուկրաինայի մասով: Կրեմլում եւ ՌԴ ԱԳՆ-ում նաեւ տարակուսած են ՀՀ վարչապետից, որը, նրանց պնդմամբ, չի հավասարակշռել Զելենսկու այդ հայտարարությունները: Նշում են՝ անհասկանալի է, որ Երեւանը հարթակ է տրամադրել նման հակառուսական արտահայտությունների համար:

- Միջազգային պրակտիկայում գագաթնաժողովների հյուրընկալողները չունեն հյուրերի ելույթները գրաքննելու իրավասություն կամ հնարավորություն: Փաստորեն, Մոսկվան Ուկրաինայի դեմ իր անիմաստ պատերազմը դադարեցնելու փոխարեն փորձում է արհեստականորեն սահմանափակել Հայաստանի գործընկերների շրջանակը:

- Մի նյուանս. արձանագրեցին, որ թե՛ Նիկոլ Փաշինյանը եւ թե՛ Ուկրաինայի առաջնորդը, տիրապետելով ռուսերենին, Երեւանում շփվել են անգլերենով, եւ սա, ինչպես ասում են, ժեստ է ընդդեմ Ռուսաստանի:

- Ուկրաինայի նախագահի համար քաղաքականապես անընդունելի է, որ նա օգտագործի այն երկրի լեզուն, որը շարունակում է ամեն օր սպանել ուկրաինացի քաղաքացիների: Երկխոսության մեջ, երբ հնարավոր է, ընդունված է ընտրել երկու կողմերի համար ընդունելի լեզու:

- Փաշինյանը հայտարարում է՝ Հայաստանը Ռուսաստանի հետ դաշնակից չէ Ուկրաինայի հարցում: Ինչպե՞ս կգնահատեք հայ-ուկրաինական հարաբերությունները, ի՞նչ զարգացման հեռանկարներ ու կոնկրետ ուղղություններ կան:

- Հենց ռուսական գործոնի պատճառով է, որ Ուկրաինայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները շատ ավելի թույլ են զարգացած, քան թույլ կտան տնտեսական համագործակցության ներուժը եւ մեր երկրների միջեւ պատմական երկարատեւ կապերը, որոնք ավելի վաղ են ձեւավորվել, քան կիիմադրվեր Մոսկվան: Եվրոպական ինտեգրման գործընթացներին մասնակցելու՝ Հայաստանի որոշումը լրացուցիչ տարածք է ստեղծում քաղաքական երկխոսության համար:

- Անկախ Զելենսկու հայաստանյան այցի ինտրիգներից, ըստ Ձեզ, ուրիշ ինչո՞վ նշանավորվեց Ուկրաինայի ղեկավարի այցը ձեր երկրի համար, ինչ-որ հեռանկար բացվե՞ց ինչպես եվրոպական ընտանիքի հետ կապերի խորացման, այնպես էլ՝ Երեւան-Կիեւ փոխհարաբերությունների զարգացման տեսակետից:

- Եվրոպայի հետ քաղաքական կապերի ամրապնդումը կարեւորագույն նշանակություն ունի Ուկրաինայի համար, այդ իսկ պատճառով Ուկրաինայի նախագահը պարբերաբար մասնակցում է Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովներին՝ չնայած ռազմական գործողությունների հետ կապված մարտահրավերներին: Բարձրագույն մակարդակով երկխոսությունը միշտ օգտակար է երկրների միջեւ հարաբերությունների զարգացման համար: Միեւնույն ժամանակ, Ուկրաինայի նախագահի վերջին այցը Հայաստան առաջինն է՝ 2002-ից ի վեր. վերջին այցը տեղի է ունեցել 2002-ին, իսկ Հայաստանի վարչապետն Ուկրաինա է այցելել 2011-ին:

Արա ԱԼՈՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am